բ) Հեղինակը, ըլլալով նաեւ իրանական նիւթերու հետազօտիչ, Թլկուբանցիի լեզուական եւ բանաստեղծական ստեղծագործութիւններուն մէջ՝ վկայեր, զուգեր, ազդեցութիւններ եւ անցքեր կը գտնէ, կը մատնանշէ ու կը համեմատէ սբ. Գրիգորիսի (նաեւ արաբական–իսլամական) քանահիւսութեան հետ, մեկնելով միշտ հայ եւ պարսիկ երկրամասերու դրացնութեան եւ ժողովուրդներու փոխադարձութիւններու դիտանկիւնէն, որոնք պատմականօրէն ակած են հայ Ակռաչխեան քաղաքակրթութեան շրջանէն, տես՛ նաեւ 66–428են Ք. յ.։

Ա. բաժինին կ'անդրադառնայ յատկապէս իր ծառաջաբանին մէջ (էջ 1–16) ուսումնասիրելով «The early roots of Armenian lyric poetry in a country intimately linked to the culture of pre-Islamic Iran»... համոզուած ըլլալով նաեւ որ «Mediaeval Armenian poetry was profoundly influenced in this period by the poetic traditions of the sourrounding Muslim cultures» (էջ 1)։

Գործնականին մէջ, Ե. Թլկուբանցին տեսական այս դաշտին մէջ զետեղուած է Russellի կողմէ եւ գրեթէ այդ տեսադաշտին մէջ միայն կ'ուսումնասիրէ անոր սիրային խորք ունեցող տաղերը, լեզուական յատկանիշները՝ լի ժողովրդական եզրերով ու մօտեցումով, ինչպէս նաեւ անոր բանաստեղծութեան «ձեւական» ընդհ. հանգրուանքը։

Փրոֆ. Russellի այս աշխատանքը իսկապէս պէտք է արժանանայ գնահատանքի եւ բաղդատական այն ազատիչ կերպը, որով կը քալէ էջէ էջ, նուաճումի հանգրուան մը պէտք է նկատուի, աւելի մօտէն եւ թերեւս հարազատօրէն բացայայտող՝ մինչեւազարեան մեր քանահիւսութեան մթնոլորտը, ընդհանուր մտածողութիւնը, լեզուական յատկանիշները եւ տաղաչափական ձեւերու արտաքին կիրարկումը, որոնք բացայայտ ազդեցութիւններ կը կրեն, միշտ համաձայն հեղինակի հետազոտութիւններուն։

Այս հրատարակութիւնը, սակայն, որ օժտուած է բառերու մեկնաբանութիւններով, լեզուագիտական, քերականական եւ չարադատական բացատրութիւններու բաւականին ընդարձակ ու մանրազնին քննարկումներով, չունի մբրեք ժողովրդական բնոյթ, այլ կը միտի ըլլալ՝ միայն մասնագիտական կարեւոր նպաստ մը հայագիտական այն ընդարձակ կալուածին, որ վերջին քսանամեակին հետզհետէ ընդարձակուեցաւ Եւրոպայի եւ Ա. Մ. Նահանգներու գիտական զանազան կեդրոններու մէջ։

Մրտանց կը գնահատենք Հեղինակը եւ հրատարակիչները։

Հ· Տ· ԵԱՐՏԸՄԵԱՆ

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՎԷՑԱՒՐԵԱՅ»-Ի ՔՆՆԱԿԱՆ ԲՆԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՆԱԼ

Կիմ Մուրազեանը 1976 Ք. Երեւանում լոյս ընծայեց «Բարսեղ կեսարացին եւ նրա "Վեցօրեան" հայ մատենագրութեան մէջ» ուսումնասիրութիւնը եւ 1984–ին նոյն Բարսեղ կեսարացու «Ցաղագս սուրբ Աստուածայնոյ Գրոց Վեցաւրեայ արարչութեանն» ճառերի քննական բնագիրը, որի հիմքում ընկած են գոյութիւն ունեցող 31 ընդօրինակութիւններից 20–ը։ Միայն քննական բնագիրն է մեզ հետաքրքրում. ուստի նախորդ հրատարակութեանը եւ սոյնի առաջաբանին չենք անդրադառնայ։ Բնատարակութեանը էջերի եւ տողերի համարները ստորեւ դիրը տողատուած է, որով էջերի եւ տողերի համարները ստորեւ զատեցինք (.)-ով։ Ելակէտ ենք ընդունում առաջաբանի էջ ԺԲ-ի հետեւեալ տողերը, որոնք վերաբերում են դասական գրաբարով թարգմանուած կամ գրուած որեւէ քննական հրատարակութեան. «"Վեցաւրեայ"ի հայերէն թարգմանութիւնը չօչափելի նըպաստ կարող է բերել դասական հայերէնի օրինաչափութիւնների, պաստ կարող է բերել դասական հայերէնի օրինաչափութիւնների, քերականական համակարգի, հոլովական–խնդրառական ինքնատիպութիւնների, ինչպէս նաեւ գաւառական նորոյթների իմաստով»։ Բնատարակութեան սկզբունքները» հատուածում (էջ ԽԵ–ԽԲ) չենք գըտնում հետեւեալ կէտական հարցի պատասխանը. ի՞նչ է ներկայացնում հիմնական քննագիրը. դա մէ՞կ ձեռագրի քննագիրը է, որ սրբագրուել է մի քանիների տուեալներով, թէ բոլորի հիման վրայ կազմուած լոկ ձեռագրային «քննական–համեմատական քննագիր» է, ինչպէս կոչուած է էջ ԽԵ–ում։ Այլընթերցումների վաժնի մասին ասուած է. «Ծո

ՃԱՌ Ա

1. ԷՀ 1, *խորագիր՝* «Սրբոյ Բարսղի եպիսկոպոսապետի կեսարոյ Կապադովկացւոյ Ցաղագս վեցաւրեայ աւուրց»· *Ճառ Ա–ի ծան.* 1*–ում ասուած է՝* «*Նախընտրեցինք հնագոյն դրչագրի խորագիրը, որը անհամեմատ մօտ է ու հարազատ բնագրին*», *որին ընթերցողը մնում է անտեղեակ: Սրան Թիւրիմացութեան մէջ են դնում այս խորագիրը, որ բնագրին է տրուած, եւ Հրատարակութեան տրուածը՝* «Ցաղագս վեցաւրեայ արարչութեան»: *Եթէ հեղինակի անունը Բարսեղ է, դասական դրաբարում սեռականը չի կարող լինել Բարսղի, –ե– –ի տղմամբ, որ լոկ միջնադարեան է: Եթէ ուղղականը կեսարիա է, դասական դրաբարում սեռականը չի կարող լինել Կեսարոյ, այլ՝* Կեսարիայ: Վեցաւրեայ աւուրց–*ը դժուար թէ դասական դրաբարում ասուէր*· *յն*· ἑξαήμερον–*ը բառարանում բացատրուում է «վեց օրուայ ժամանակաշրջան», փակագծերում աւելցուում է «Արարչութեան»: Ճառ Ա–ի ծան*· 1*–ում ասուած է*· «"Վեցաւրեայ"*ի հայերէն թարգմանութիւնը բոլոր ճառերի համար ունի միեւնոյն խորագիր–ծանուցումը՝* "Վասն վեցաւրեայ աւուրց արարչութեան"»· *ինչո՞ւ ուրեմն անտեսել արարչութեան բառը, որ անհմաստ վեցաւրեայ աւուրց–ին իմաստ է տալիս:*

2. 1.1 Ի գրոց· *յաջորդ մէջբերումից երեւում է, որ սա Սուրբ գիրքն է կամ Աստուածաշունչ գիրքը: Ճշտակութեան համար նպատակայարմար է, որ քննական բնագրերում ընդունենք դլխադրով* Գիրք *ուղղագրութիւնը, անկախ իւրաքանչիւրիս կրօնական համոզմունքներից: Նոյնպէս գրել* Գիր:

3. 1.2 Սկիզբն այս· *տ*· 4 սկիզբնս այս· *որեւէ ձեռ–ում նախորդում էլ –ս յօդը չկա՞յ արդեօք: Սովորականը՝ –ս յօդ եւ ետադաս այս որոշիչ:*

4. 1.4 «… *զնմանէ: Քանզի*»· *կէտադրութեան երեւանեան կանոնների համաձայն, որոնց պէտք է հետեւէր հրատարակողը, ստորադասական շաղկապից առաջ (,) է դրւում: Այս կանոնը բազմիցս խախտուած է բնագրում, ինչպէս տ*· 5*–ում՝* «… *Աստուած: Զի*…»: *Բնագրի կէտադրութիւնը այլանդակութիւն է եւ խանգարիչ (տե՛ս դիտ*· 319):

5. 1.4 «*Քանզի զիա՞րդ ոչ ցանկալի է*»· *անհրաժեշտ է զիա՛րդ, ինչ*· *տ*· 2*–ում կարդում ենք «Քանի՛ վայելուչ է եւ գեղեցիկ…»:*

6. 1.5-7 «*Զի զարարածս երկնի եւ երկրի կարգելով եւ պատմելով առ բնակիչս աշխարհի, թէ ոչ ինքն յանձնս գտաւ այնպէս*»· զարարածս *այստեղ հաւանաբար նշանակում է «արարչագործումը»*· *ուստի որեւէ ձեռ*· *չունի՞ առանց –ս–ի ձեւը: — կարգելով եւ–ի վրայ*

*նախընտրելի է մի ձեռ–ի կարգելոց էր–ը, որի հետ յարմար է պատմելով· թէ չէ՝ գործիականով դրուած երկու անորոշ դերբայներն անյարիր են գտաւ ստորոգեալի հետ: — Ցանձնս–ի փխ պէտք է

ժառանգ՝ իւր անձին փոխանակ կացուցանէ» (*Բ Մակ ԺԴ* 26)· *դարձուածքներում ունենք* յորդեգիրս:

14. 3.1 «*Զմեծ պատիւ սպասս թագաւորութեանն՝* [···] *անարգէր*»· *մէկ ձեռ. ունի զմեծապատիւ ճիշտ ձեւը· այս ածականը կայ նաեւ Սուրբ գրքում* (*այսուհետեւ՝ ՍԳ*):

15. 3.9-10 «*Վասն պահանջելոյ վրիժուցն չարագործացն յաստիճան մահու հատանէր*» *Մովսէս· իմաստը պահանջում է* [*ի*] *չարագործացն, որ ձեռ-երից մէկում կա՛յ արդեօք*:

16. 3.10-11 «*Որում վասն բարի գործոցն, զոր գործէր ոչ առ չարագործն, զոր եղեւ փախուստն ի նոցանէ*»· *երեք ձեռ. ունեն ընդգծուած զոր-ը, որ բոլորովին անտեղի է եւ աւելորդ, քանի որ ուրիշ ստորոգեալի հլ չի վերաբերում երկար նախադասութեան մէջ, կամ էլ նախապէս որոյ էր*:

17. 3.19 «*Որպէս մարթիցէ տեսանել մարդոյ զաներեւոյթ մեծութիւնն*»· *ընդգծուածը, որն անշուշտ միահետ պրոլեպսով է ձեռ-ում, միաղիմի մարթ իցէ պիտի կարդացուի մարդոյ տրականի հետ: Միայն չէր լինի մարթիցի*[*ի*]*-ն*:

18. 3.22 երբէք· *միշտ պրեվի է երբեք, քանի որ վերջածանցն է -եք, ինչպէս ուրեք եւ այլ բառերում: Բնագրում ընդունուել է միայն երբէք*:

19. 6.5 «*Ի մանրամաղ եւ անզաւր փոշւոցն առին սկիզբն հաստատել*»· 5.17 *եզակի փոշի մանրամաղ, տ*· 18-19 *ի մանրամաղ փոշւոյն*· *այդ յոդնակին անյարիր է եզակիներին: Մէկ ձեռ. ունի փոշւոյն, երկուսը՝ փոշոյն եզակիները· պիտի ընտրուէր ի փոշւոյն ե-վակին: — ճիշտը կը լինէր հաստատելոյ սեռականը· «Որ սկիզբն առ խաւսելոյ ի Տեառնէ»* (*Ա Պ* 368):

20. 7.3-5 «*Զի, զոր աւրինակ* [···] *վատնէ: Այնպէս եւ արարիչն*»· *Զի-ից առաջ, ինչպէս եւ Այնպէս-ից առաջ դրուած* (:)*-ը պիտի լինէր* (,):

21. 7.13-14 «*Գուցէ յորժամ մարդկեղէն մտաւք կամիցիս խրճդրել՝ վրիպեալ գտանիցիս*»· *կէտադրութեան արդի կանոնները պահանջում են* (,) *դնել փուճի փոխարէն, որ Մխիթարեան հրատարակութեանն է:* (,)*-ի վրա* (՝) *է գործածուել նաեւ շատ ուրիշ տեղերում, ինչպէս* 14.6-8*-ում*:

22. 8.9-10 «*Զհեւ ի վերայ քո անցանեն ի չրջելն իւրեանց*»· *Թոռն· բ, 4, ծան· 29 նկատել է տալիս եւ-ի անհրաժեշտութիւնը զհեւ-ից յետոյ, փաստարկելով տ*· 13 «*որ ի վերայ մեր եւ զմեաւք չրջին*»*-ի եւ-ը: Եթէ որեւէ ձեռ-ում չկայ այդ եւ-ը, կարելի էր ընդմիջարկել անհրաժեշտ ծանօթութեամբ*:

23. 8.11-12 «*Չէ դիւրին մտաց մերոց կալ ի վերայ ի սկզբան աչխարհիս*»· *Թոռն· բ, 5, ծան· 30 իրաւամբ սեռական ունի կալ ի վերայ իրիճ դարձուածքում եւ բնագրում՝ ի վերայ սկզբաց, առանց աւելորդ ի նախդրի· «Ի վերայ չափոցն աստեղաց կացին»* (11. 18-19), «*Ի վերայ չափոյ տեղեաց նոցա*··· *կացին*» (12.5-6):

24. 8.15 Ցուսմէ· *Թոռն· բ, էջ* 5 *ունի ճիշտ յուսմէ ձեւը· «Էջ սա անխոհեմ բոլոր Ձեռ-երում է, ուղղելի է ծանօթութեամբ: Կարծում ենք, որ կարելի է սրբագրել ձեռագրերի ակնյայտ վրիպակները, իհարկէ զգուշացնելով ընթերցողին: Ձկայի՞ն ձեռագրեր, որոնք ունենան յուսմէ: Ձգիտենք*:

25. 9.9 «*Որ ի վերայ մերն եւ զմեաւք չրջին*»· *յօդն աւելորդ է ըստ* 8.13 «*որ ի վերայ մեր եւ զմեաւք չրջին*»*-ի*:

26. 10.6 Տուրնջեան· *-ը--ով տարածուած սխալագրութիւնը պէտք է ուղղել եւ այդ ձայնաւորը պուրս հանել, քանի որ վկայուած են առանց պրան ճիշտ դրելաձեւեր: Որոշ ձեռագրեր չունե՞ն տուրնջեան ճիշտ ձեւը*:

27. 12.4 «*Նկարոց աստեղաց եղեն մեկնիչք*»· *Թոռն· բ, 8 նկարոյ, սակայն այս գոյականը դասական գրաբարում Ոի հոլովման է, եւ մէկ ձեռ. ունի այստեղ նկարուց ճիշտ ձեւը*:

28. 12.15 «*Հատուցանէ ըստ իւրաքանչիւր գործոց յաշխարհին հանդերձեալ*»· *Թոռն· բ, 9 եւս ունի յաշխարհին, որ պիտի լինէր յաշխարհիս, ներգոյական*:

29. 13.2 «*Որով եմք ի կենդանիքս*»· *Թոռն· բ, 9 ունի քերականօրէն միակ ճիշտ ձեւն առանց ի նախդրի, որ նա ջնջել է ծան· 22-ում ղգուշացնելով, քանի որ ուղղական հոլովը չի գործածւում որեւէ նախդրի հետ: -Ս-ն յօդ է*:

30. 13.13 «*Բայց զայս պիտեմք, սիրելիք, զի*»· *պէտք չէ մոռանալ վկայականների չեչտը՝ սիրելի՛ք, որ քնագրում աւելորդ է համարուել ամենուրեք*:

31. 14.6 Փախչիլ· *մէկ ձեռ. ունի փախչել ստոյգ ձեւը· վարդաց ապացուցուած է, որ դասական գրաբարում ի յծորդութեան բայերի անորոշ դերբայը վերջանում է -ել-ով: Բնագրում, դժբախտաբար, այս ճշմարտութիւնը անտեսուել է այլուր եւս եւ միշտ*:

32. 14.9 «*Ինչ որ սկսանի*»· *առատ է քնագրում, փոխ որ ինչ, ինչպէս* 15.6 *զոր ինչ*:

33. 14.13-14 «*Բուռն հարեալ ոչնիցին զմիմեանց մի ըստ միոջէ մեանս*»· *հինգ ձեռ. ունեն ազգք յոդնակի եւ ճիշտ թուով ենթական յոդնակի ստորոգեալների հետ, որ տիրապետողն է ՍԳ-ի քնագրում*:

© National Library of Armenia

34. 14.15 «*Ըստ իւրաքանչիւր շարժումն ժամանակացն*». *երկու ձեռագիր ունեն* ըստ–*ի եղակի խնդրի ճիշտ հոլովաձեւը՝ եզակի տրական, շարժման*:

35. 14.19 «*Բարիոհ ուսաք*». *երեք ձեռ. ունեն* բարւոհ *ճիշտ գրութիւնը*: *Ինագրում երբեմն կայ* բարւոհ է, *ինչպէս* 89.17, 91.14, *բայց գերակշռողը սխալ* բարիոհ–*ն է*:

36. 15.17 «*Նայեաց, տես*». *ինչպէս կոչականների, այնպէս էլ բայի հրամայականի չեչտը անտեսուած է բնագրում*: *Ցայտնի է, որ անցեալ կատարեալի եզակի երրորդ դէմքը եւ եզակի հրամայականը կարող են ձեւով նոյնը լինել որոշ բայերի համար, եւ* (՛)–*ը կը լինի տարբերակիչ նշան*:

37. 16.9-10 «*Զիք ինչ, որ գնայ եւ անցանէ, եթէ ո՛չ սկիզբն իցէ գնացից նոցա*». 14 *ձեռ. ունեն նորա ճիշտ եզակին ըստ ինչ եզակիի*: — *Ո՛չ–ի չեչտն աւելորդ է. ուրիշ տողերում էլ անտեղի* (՛) *է ստացել* (19.14):

38. 16.12 «*Կարես կալ ի վերայ այնց, որ ոչ ունի կատարումն*». *այնց յոդնակիի վրա անհրաժեշտ է այնր եզակին, կամ էլ ունի–ն սխալ լինի յոդնակի՝ ունին*: *Էջատակում ձեռագրային այլընթերցում չկայ այս երկու բառերի համար*:

39. *Էջ* 16-17 «*Ի միտ առնուլ զպատչաճս աւետեւոյթն Աստուծոյ*». *երկու ձեռագիր ունեն աւետեւութիւն, որն անշուշտ նախապէս աւետեւութին էր, սեռական, ինչպէս Աստու*[*ա*]*ծոյ–ն*: «*Ծանաւթք աւետեւութին Աստու*[*ա*]*ծոյ լինիցին*» (*Ագ* 165), «*Որ ի պատկեր աւետեւութին Աստուածոյ*» (*Կող Ա.* 15): *Նոյն սխալը՝* 320.2:

40. 18.4 «*Եւ զայս զի ասացի, զի ուսցուք եւ մեք զկամն Աստուածոյ*». *առաջին զի–ն, այս կէտադրութեամբ, մեզ աւելորդ է թըւում. ձեռագրային տարբերակ չկայ*: *Գուցէ զի՞ է՝ «ինչո՞ւ», հռետորական հարցի ձեւով*:

41. 18.14-16 «*Կէաք* [...] *երեւին*: *Որ* [...] *հաստատին, կան մնան* [...] *եւ որ աչալուքն երեւի, անդամալուք կատարի չարժումն նուագացն նոցա*». *ճիշտ է երկու ձեռ–ի երեւին յոդնակին, որ յարմար է յոդնակի մէս ստորոգեալներին*:

42. *Էջ* 18-19 «*Իսկ որ արուեստս արդեամբք հաստատին...*». *որ–ը կամ արուեստս–ն աւելորդ է*:

43. 20.16 «*Զի մի ըստ միոջէ ի մի մի՛ արասցէ*». *ճիշտը՝ ի մի մի, առանց* (՛)–*ի*:

44. 21.17-20 «*Բնութիւն ջրոյ ընդ ամենայն երակս երկրի բաշխեալ է, որպէս յանդիման ցուցանեն, որ ջրհորս փորեն, զի ինքեանք ի վերայ ինքեանց ի վերայ երկրի գտանին*». *ճիշտ է* 4 *ձեռ–ի ջուրց*

յոդնակին, ինչպէս պահանջում են ինքեանք, ինքեանց եւ գտանին յոդնակիները: — *Ի վերայ–ի վրա ճիշտ է երկու ձեռ–ի ի վերոյ–ն. ջրերը ոչ թէ իրար վրայ են, այլ՝ իրարից վեր, իրար վերեւում, հողի տարբեր եւ իրար վրայ դիզուած շերտերում*: — *Տողատակում թէեւ չկայ, սակայ ինքեանց–ից յետոյ անհրաժեշտ է* [*եւ*] *չաղկապը*: — *երկրի–ից յետոյ տեղին են* 13 *ձեռ–ի եւ ի մէջ երկրի բառերը*: *Եղնիկն էլ ունի այն միտքը, թէ ջրերը երկրի վրայ եւ երկրի մէջում են*:

45. 22.4 «*Երկինք զարձեալ բնութիւնք զբարձրաբերձ բարձանց ղտեղիս ունին, եւ երկիր բնութեամբ զստորին կողմն սանդարամետացս ունի*». *բնութիւնք–ը պիտի լինի բնութեամբ, որ* 2 *ձեռ–ում է* (*մէկն ունի բնակութեամբ*), *ինչպէս ցոյց է տալիս նախադասութեան բնութեամբ–ը*: *Թոռն., ֆ*, 14, *բնութեամբ*:

46. 22.11-13 «*Արդ՝ մի՛ խնդրեսցես զմեկնութիւն իւրաքանչիւր պատմութեանցն յայնցանէ, որք հաստատեցանն յաչխարհի, այլ պատմութեանցն յայնցանէ, որք մեկնեցանն ճանաչին*». *յայնցանէ–ն յորոց լռեցին զիրք այնքիւք, որ մեկնեցանն ճանաչին*: *ըստ մեզ* [*զ*]*այնցանէ «նրանց մասին» էր, որ տողատակում չկայ. նոյնպէս եւ յորոց–ը* [*զ*]*որոց էր, թէեւ մի ձեռ. ունեն որոց եւ սրբ*: *Թոռն., ֆ*, 14, [*զ*]*որոց*: — *Կէտադրական սխալներ կան*:

47. 24.3 «*...զընութիւնսն, որ ունի զդոյնս...*». *ճիշտը կը լինէր ունի*[*ն*] *յոդնակին, քանի որ յարաբերեալը՝ զբնութիւնսն, յոդնակի է*:

48. 24.6-7 «*Ի միջոյ բառնալ զդոյնս երեւելեացն, որ արար զքեռնին...*». *երկու ձեռ. ունեն արարան, որ մեզ ուղիղն է թւում,

պիտոյ է *միադիմիի խնդիրը, ինչպէս* 26.5 «*Սակայն եւ նմա պիտոյ է ինչ մի, որ եւ զնա ի վեր ունիցի*»:

53. 26.8-9 «*Անպատասպարան դիւտիւքն մերովք աստանդութիւնն աւգտակար իրացն մերոց առնեմք*». *ճիշտ է մէկ Ջ–ի աստանդութիւնն եզակի հայցականը:* — *Հաւանաբար աւելի յարմար է հրկու ձեռագրի «իրացն մտաց մերոց»–ը:*

54. 26.13 «*Ելանիցէ մեզ դէպ բանն, որ եղեւ առ Ցովբ*». *ճիշտ է ի դէպ–ը, որ տողատակում է եւ նշանակում է «յարմար է գալիս»*. «*Ի դէպ ելանէ նոցա աստուածական բարբառն*» (*Եզն* 1959, 55.13-14, 92.13-14):

55. 27.6 «*Եթէ զինն ինն ունիցի զերկիր զիւր անձն ի վեր, դարձեալ տարակուսեալ ի վարանս մտեալ խնդրիցես, թէ զիարդ ինն զինն ունիցի ի վեր՝ զայն ոչ դիտիցես*». *տ*. 11 «Եթէ երկիր ինն զինն ունիցի ի վեր՝ զայն ոչ դիտիցես». *տ*. 11 «*Եթէ երկիր ինն զինն ունիցի ի վեր*». «*Զինքն ինքն*»–*ի փխ մէկ ձեռ*. *ունի* ինն զինն, *որ ճիշտն է եւ նոյնն է յաջորդ երկու* ինն զինն–*ի հետ: Զերկիր հայցականը, որ տարբերակ չունի էջատակում, պիտի լինի ուղղական՝ երկիր, ինչպէս տ*. 11–*ում:*

56. 28.1-2 «*Զայս ածգուք զմտաւ եւ ի նոյն թեւակոխեացուք, մի մեզ ի զգուշութիւն լինիցին*». *սրա –ն դիրը որպէս յօդ պիտի ընդունուի:*

57. 28.5 Փւսիկեանի. *դրամարկ բառարաններն ունեն* փիւսիկեան *կամ* փիւսկեան, *իսկ Հ. Աճառեանն իր արմատական բառարանում՝* «փիւսիկեան ... *որ եւ* փիւսկեան». փւսկեան–*ը արտասանելի չէ, թէեւ «Աւելի կանոնաւոր կ'ըլլար գրել* հւսիսոյ» («Ռերականութիւն հայկազեան լեզուի», էջ 478, Ջ):

58. 28.18 «Սոֆիմբ *հաստատեալ կայ*». *ճիշտը՝* սոֆիմբբ, –բ–*հոլովակերտով:*

59. 28.20-21 «*Ի վեր հայի շարժել եւ վերանալ, եւ ինչ, որ ծանր է, ի խոնարհ հայի ի ձգել իջանել*». *կա՛մ* [ի] շարժել, *կա՛մ* [ ]ձգել: *Գուցէ՝* հակ[ի]. *Եզն* 85.23 «*ոչ տայ վերանալ եւ ոչ ի խոնարհ* հակել»: *Բայց* հայի 30.9-10–*ում կայ:*

60. 29.7 «*Եթէ հաւանեցուցիչ թուխցին քեզ այս, որք ասացանս*». *անտեղի այս եզակիի փխ երկու ձեռ*. *ունեն բանիս, որ ճիշտ է քերականութեան համար:* *Այսբ *դերանուն չկայ. գացառուած չէ այսոքիկ–ը այստեղ:*

61. 30.7-9 «*Ամենայն ինչ, որ պարզ բնութիւն է, ըստ շարժումն իւրոյ բնութեանն է յատուկ եւ ամենայն իրբ, որ թեթեւ է, ի վեր հայի գնացք իւր*». *ըստ նախդրի եզակի խնդիրը տրական է գոյականների եզակիում. ուստի՝ ըստ շարժման, որ երեք ձեռ–ում է, թէեւ սրանով հանդերձ նախադասութեան առաջին մասի միտքը յստակ չէ մեզ համար:* — Իրբ–ի *փխ նախընտրում ենք երկու ձեռ–ի* իրիբ *սեռականը:* — *Հայի եզակիի փխ ապասելի էր* հայի[ն] *յոգնակին՝ գնացբ անեզականի հետ որպէս ենթակայ:*

62. 30.12 «*Որք չրջմն եւ պատին զմիմեամբն*». *ճիշտն է մէկ ձեռ–ի զմիմեամբբ յոգնակին. փոխադարձ անձնական դերանունները չեն կարող եզակի թիւ ունենալ:*

63. 32.4-5 «*Մեք մի՛ հաւանեցուք երկրորդել զայն, քանզի վնասեն*». *անյարիր են զայն եզակին ու վնասեն յոգնակին. տարբերակ չկայ. գուցէ՝* զայն[ս]:

ՃԱՒ Բ

64. 35.2-3 «*Թէպէտեւ յոյժ վրիպեալ գտանիցիմք կատարեալ մտաց մեծապատում առաւելութեան նոցա*». *ճիշտ է երեք ձեռ–ի ի մտաց մեծապատում առաւելութեան նոցա*». *տ*. 14–*ում կայ* զիւղէ, *եւ այստեղ մէկ ձեռ. ունի* հիւլէն. *տուած*». *տ*. 14–*ում կայ* զիւղէ, *եւ այստեղ մէկ ձեռ. ունի* հիւլէն. *նախդիրը կատարեալ–ից առաջ, որով մտաց–ը դառնում է բացառական հնդհակ վրիպեալ գտանիմ դարձուածքի համար:*

65. 35.11-12 «*Երկինք եւ երկիր միով հաւանութեամբ միանգամայն առին զիւրաքանչիւր արարածոց*». *ճիշտ է 7 ձեռ–ի արարած «ստեղծում» հայցականը, փխ. արարածոց անյարիր սեռական–տրականի:*

66. 35.12-13 «*Երկինք ընկալան զկատարումն արարածոց իւրեանց*». *արարածոյ փխ արարածոց. ոչ մի ձեռ. չունի մեր առաջարկածը: Այլ բնագրերում եւս կայ արարածբ «ստեղծում», բայց հաւանաբար դասական չէ:*

67. էջ 35-36 «*Ծաղիկք իւրաքանչիւր մեծապայծառ երփն երփն գոլոնց, եւ մարդք ըստ իւրաքանչիւր անուշահոտ խոտոցն՝ եւ արմատք ըստ իւրաքանչիւր համահամն ճաշակաց*». *երկու ձեռ. ունեն մեծապայծառ–ին նախորդելիք ըստ–ը, ինչ. յաջորդ միւս երկու ըստ–երը. Թոռն. 15–ն ունի այս ըստ–ը:*

68. 37.16 «*Զնոյն զիւղայն, այսինքն զնիւթն առ, ասեն, Աստուածն*». *տ*. 14–*ում կայ* զիւղէ, *եւ այստեղ մէկ ձեռ. ունի* հիւլէն. *ճիշտն է ուրեմն* զիւղէն *փխ* զիւղայն, *որ ոչ մի հոլովաձեւ չէ: Մի անգամ ընդմիշտ ընդունելով, որ այս գոյականի ուղղականն էջատակում հաւանաբար հիւղ է, ինչ. 38.3 կայ* զիւղէ *ճիշտ հայցականը, սխալ պէտք է համարել հիւղ ուղղականը, որ կարդում ենք 38.1–ում:*

69. 38.5 «*Առանց կերպարանաց*»–*ի մէջ վրիպակ կայ, երեւի, փխ* կերպարանաց: *Նոյնը՝* 225.6 *եւ* 8: *Բնագրում* (225.5) *կայ* կերպարանաց:

© National Library of Armenia

70. 39. 9 *«Սո՞ յնպէս եւ զԱստուածոյ պարտիցիմք կարծել արդարեաւ՝ քաւ լիցի»*. *Առաձեռնը չունի արդարեաւ*. *կայ արդարեւ*: *Վենետիկեան հրատ.–ն ունի այստեղ արդեւք, ինչ*. *մի ձեռ.., եւ ճիշտը սա է, որ քնաքրում արդեաւք է*:

71. 39. 19 *Էառ*· *ոչ մի ձեռ*. *չունի*՝ *առ ճիշտ ձեւը*. *ա–ի առաջ է– ահականը դասական դրաբարին յատուկ չէ, ինչ*. *սովորեցնում է Մեյէն* (Esquisse, էջ 124)։ 295. 1-2 *«Շունչ [...] ա՛ռ հրամանն»*· *ա՛ռ–ի չեչտն աւելորդ է*։ 86. 7 *դարձեալ Էառ*։

72. 39. 20 *«Այսու բանիւք յուրացութիւն յԱստուածոյ առնէին, եւ յամենայնէ, որ...»*. *ճիշտն է մէկ ձեռ–ի ուրացութիւն անորոշ հայցականը*: *Ճիշտ կը լինի նաեւ զուրացութիւն, ինչ*. *«Ոյք առնէին զուրացութիւն, առեցի»* (*Սաղ* ճ 3)։

73. 41. 9 *«Կապեալ պարապանճեսցէն»*· 4 *ձեռ*. *ունեն կարկեալ ճիշտ բառը*· *կարկիմ նչ*· *«պապանճիլ»*, *որով առացւում է հոմանիշների միատեղ գործածութիւնն, որ սիրելի է դասական դրաբարին*։

74. 42. 10 *Ի յաւդոյ*· *անընդունելի է կրկնակ ի յ– նախդիրը*· *ի–ն միանգամայն աւելորդ է, եւ ձեռ–երում պէտք է որոնել ճիշտը*։

75. 42. 13 14 *«Արդ՝ մնաց մեզ մի պատմութիւն, որով ցուցցէ զհանդէս առաքինութեան մտաց մերոց ի մի պատճառն, որ մնաց»*· *ո՞վ է ցուցցէ ներգործականի ենթական*: *Ըստ մեզ՝ նախապէս էր «որով ցուցց[ի] [ ]հանդէս»*, *որ էջատակում չկայ*: *Ընդունելի կը լինէր նաեւ որ[] ցուցցէ զհանդէս*։

76 42. 15-16 *«Արդ՝ քանզի ոչ ասացի, թէ՝ արար Աստուած ըզլուրս, ասաց, ասէ՝ "երկիր աներեւոյթ էր"»*· *ասացի–ն պիտի լինի ասաց, որ երկու ձեռ–ում է*· *ենթական Գիրն է*: *Թէ՝–ի (՝)–ը միանգամայն աւելորդ է*։

77. 42. 17-18 *«Իմացիս, թէ զի՞նչ էր, որով ծածկեալ էր զերկիր եւ էր աներեւոյթ»*· *ճիշտն է երկիր ուղղականը, որ էջատակում չկայ, սակայն* 43. 2 *«Ասել, թէ աւդով ծածկեալ էր երկիր՝ աննման է»*։

78. 45. 5 *«Հարիւն խնամ եւ հատին հաւատս ի հաւատից Քրիստոսի»*· 10 *ձեռ*. *ունեն խրամ ճիշտ բառը վրս խնամ*: *Թէեւ էջատակում չկայ, բայց ճիշտ բայը հատին է*· *աստւել է ակամ հատանել, խրամ հատանել*։

79. 45. 13-14 *«Պատճառս ի կորուստ կենաց ձերոց կարկատէք ձեզ ձերոցդ անձամբ»*· *ընդգծուածն անքերական, անհամաձայնութիւն է*· *ձեռ–եր ունեն ձերով, ձերոյին, ձերոյինդ, ձերովդ, որոնք էջատակում տ*· 13–*ի ձերոց–ի համար են նչուած, բայց տ*· 14–*ի ձերոցդ–ի վրս ճիշտ ձեւը դրանցում է, անձամբ եզակի գործիականի հետ*։

80. 46. 13-14 *«Մինն առաքինութեամբ իւրով կորուսիչ է ընկերին իւրում»*· *տրական իւրում–ի վրս իւրոյ ճիշտ սեռականը երկուձեռ–ում է*: *Համմտ*· *«սպառիչ նորա լինի»* (46. 18)· *–իչ վերջածանցով բառերը դոյականներ են եւ ըստ այմ սեռական հոլովով յատկացուցիչ են պահանջում*։

81. 47. 7 *«Ես զարմացեալ եմ ընդ նոցա, թէ...»*· *ընդ նոցա նչ*· *«նրանց փոխարէն»*, *սակայն իսկական իմաստը պիտի լինի երեւի «նրանց վրայ»*, *դասական դրաբարով ընդ նոսա, որ ունեն երեք ձեռ–ում*: *Համմտ*· 229. 6 *«Ընդ այս է զարմանք»*, 303. 3 *«Զարմանք մեռաղիր*: *Համմտ*· 229. 6 *«Ընդ այս է զարմանք»*, 303. 3 *«Զարմանք մեծաքանչ են ընդ ընտրողութիւնն»*, *«Այլ ընդ այն իսկ են զարմանք»* (*Ոսկ ես* 462. 4), *«Զարմանային ընդ նա թշնամիքն»* (*Ղեւտ ԻՉ* 32), 304. 1 *«Ընդ այս է դարձեալ առաւել զարմանալ»*։

82. 47. 7-13 *«Զիա՞րդ ինքն ոչ յինքեանց յանճանց ակն ածեն»*· *մէկ ձեռ*. *ունի ինքեանք ճիշտ ձեւը, որ միանգամայն յարմարւում է յաչորդ յոդնակիներին*։

83. 47. 10 *«Կեանք զմահ ոչ ծնանի»*· *ճիշտ ձեւ ծնանին–ը, ըստ կեանք անեզականի, 4 ձեռ–ում է*: *Համմտ*· *«Եղիցին կեանք քո

86. 66 1 «*Զի* ամենայնի *յաջողեալք եւ երջանիկք զտցին ամենեքեան*». ամենայնիւ *կամ* յամենայնի, *բայց ոչ տրական*. «*Ամենայն իրաւ֊ք յաջողեալք*» (*Ագ* 464), «*Ցաջողեցաւ եղեկիա յամենայն ի գործսն*» (*ԲՄնաց ԼԲ* 30)։ *Է֊ջատակում այլընթերցում չկայ*։

87. 67. 9 «*կցին զան յաւդուած*». *Թէեւ այլընթերցում չկայ, բայց ճիշտը կը լինէր* [ի] յաւդուած *կամ* յաւդուած[ք]։ Ցաւդուած–*ը զոյական է*։

88. 67. 11-12 «*Իբրեւ անցանեն ընդ ամենայն գործի սպասաւորս բանին*». ճիշտն է գործի[ս] *յոգնակին, որի որոշիչն է* սպասաւորս. *համմտ*. «*Լեզու էր, որ բախէր ընդ գործիսն*» (56. 6)։ *Հրատարակիչը այս ճառի ծան*. 3–*ում գրել է՝* «*Համմտ*. Նախսնիհ, *էջ* 1049–1050». *եւ իրօք էջ* 1050–*ում Նորայր Ն*. *Բիւզանդացին գրել է*. «*Գործիս ուղղէ եւ Հ*. *Աբս*. *Բագր*.»։ *Գուցէ գործի եզակին վրիպակ է փխ* գործիս։ *Համմտ*. «*Ցաւդապատ բանից այսպիսի* գործիք *պիտոյ են առ ի հաստատութիւն*։ *Արդ՝ զինչ պիտոյ էին այսպիսի* գործիք» (69. 6-7)։

89. 69. 9-10 «*Եւ այս ամենայն, որ յաւդապատ եւ մանրապատ բանիւք պատմեցաւն*». *որքան էլ աւելի գիտական եւ նուրբ երեւայ* մանրապատ–*ը, ճիշտն է բազմաթիւ ձեռագրերի* մարմնապատ–*ը, որ միանգամայն յարմարն է նախորդ* յաւդապատ–*ի հետ*։ — Ամենայն–*ի ենթակայ լինելու դէպքում պատահում է, որ ստորոգեալը յոգնակի դրուած լինի, ինչպէս այստեղ առանց այլընթերցման, բայց մեզ կասկածելի է թուում, եւ մերժում ենք*։

90. 70. 6-7 «*Այս բանք այսպիսեաց են, որ առնեն զարարիչն կատարած հիւղեայ*». *ճիշտ ընթերցուածը՝* այնպիսեացն, *երեք ձեռ֊ում է*։

91. 70. 11-12 «*Նախ ինքեանք հաւանեսցին միմեանց՝ լռել եւ դադարել լինելոյ հակառակ ի միմեանց*». լռել *կամ* դադարել *բայը պահանջում է բացառական հոլովով անորոշ դերբայ, ինչպէս «Դադարեցին ի շինելոյ զքաղաքն»* (*Ծն ԺԱ*. 8), «*ի ծծելոյ* [···] *չիք դադար*» (82. 14-15). *արդ՝ մէկ ձեռ*. *ունի ի լինելոյ, որ ճիշտ ընթերցուածն է*։ — Հակառակ *ածականի խնդիրը լինում է տրական կամ սեռական*. *արդ՝ երկու ձեռ*. *ունեն* հակառակ *միմեանց, որ ճիշտն է*. *համմտ*. «*հակառակ ինձ*» (*Ա*. *թագ ԻԲ* 15)։ *Հենց տ*. 14 «*հակառակ ընդունից լինին*», «*Հակառակ միմեանց են*» (80. 21)։

92. 70-71 «*Մեք ոչ հիւղեայ եւ ոչ յայլ իմեքէ ասեմք արար Աստուած մի երկինս կամ երկուս*». երկու *ձեռ*. *ունեն ի հիւղեայ ճիշտը՝ բացառական, ինչպէս յայլ իմեքէ, որն ըստ մեզ պիտի լինէր* յայլ[մէ] *իմեքէ, որ էջատակում չկայ*։

93. 71.2-3 «*Ցոյժ պիւրին եւ մեկին է ճշմարիտ Աստուծոյ մերոյ*». *ճիշտն է մերում, թէեւ էջատակում չկայ, տրական։ Դասական*

քնագրերում յաճախ են չփոթուած ստացական ածականների եզակի սեռական ու տրական հոլովաձեւերը, ինչպէս այստեղ։

94. 71. 18-19 «*Ցափշտակեցաւ յերրորդ յերկինս*». *էջատակում որպէս աղբիւր նշուած է «Կորնթ II, ԺԲ 3»*. *պէտք է հայերէնից վանել հռոմէական թուանշանները*. *տան համարը 2 է, ուր՝ «մինչեւ յերրորդ երկնից», որ էջատակում է մնացել*։

95. 72. 2 «*Զոր* ասեմ*ք*». *ձեռ*. *ունեն* ասեմ*ս, որ նախընտրելի է*։

96. 72. 4-5 «*Ասեն նոքին, թէ եաւթն բոլորակք եւ եաւթն աստեղացն, որովք չրջինն*». *ճիշտ եւ դասական ձեւն է* եւթն, *որ երկու ձեռ֊ում է*։ *Արմ*. *բառ*., եօթն «*գրուած է նաեւ* եաւթն, եւթն՝ *որոնք հնագոյն ձեւերն են*». *այբբենական կարգը խախտելով նախ պիտի նշուէր* եւթն, *իսկ* եաւթն–*ը հնագոյն է լոկ* եօթն–*ի համեմատութեամբ, ոչ* եւթն–*ի*։ *Մեյէն Ուրուագիծ–ի էջ* 38–*ում ունի մէյայն* եւթն, *էջ* 49՝ «*եւ֊ը վերջ ի վերջոյ բարբառային ձեւով արտասանուել է* io (եօթն՝ եւթն–*ից*)։ — *Մթէն իմաստը պէտք էր պարզել յունարէն բնագրով եւ հայ*. *ձեռագրերի տուեալներով*։

97. 72-73 «*Ցայնմ ձայնէ, որ մինչտ անկանի ի լսելիս նոցա, զայն իրիք ինչ բարբառ ոչ կարեն լսել*». *իմաստը պարզ չէ*. *գուցէ էր իրիք ինչ բարբառ ոչ կարեն լսել*». *իմաստը պարզ չէ*. *գուցէ էր* «զայ[լոյ] *իրիք ինչ բարբառ*» «*ուրիշ բանի ձայն*»։

98. 74. 17-18 «*Մի՛ արկցեն մեզ աշխատութիւն իմաստունքն յունաց մեկնել զայնս, որ Աստուծոյ միայն են երկինք*». *ո՞րն է յաղագ մեկնել զայնս, որ Աստուծոյ միայն են երկինք*». *ո՞րն է յաղագ բարեբարական դերանուան չարահիւսական պաշտօնը*. *գուցէ միջնադարեան է, փխ* [թե] *կամ* [զի] «*թէ*»։

99. 75. 12 «Օրհնեցէ՛ք զԱստուած ի հաստատութիւն *զաւրութեան նորա*». o–*ն փխ* աւ–*ի պէտք է վրիպակ համարել*։ *Է֊ջատակում աստուած է «Համմտ*. *Սաղմ*., *ճԺ*, 1, *ժէ*, 3»։ *ժէ* 3–*ում քնագրի տողին նմանուող բան չգտանք*։ *Իսկ ճԺ* 1–*ում՝ ի հաստատութեան է, եւ ոչ թէ ի հաստատութիւն, որ ուղեւորման պարագայ կը լինէր*։ *Ճիշտ ձեւը էջատակի մէկ ձեռ֊ում է*։

100. 76. 2-5 «*Ի սաստկութենէ հողմոց, որ բախին ընդ միմեանս ամպս ի սաստիկ բռնաւոր հողմոցն, յորժամ հարկանիցին յեթեր, զգոգս ամպոցն ճայթէ, հատանի ճայթիւն որոտմանց*». հողմոցն *բառ ի աստղանիշը յղում է Ամովս Դ* 13, *սակայն այստեղ կարդում ենք «Զի ահաւասիկ ես եմ, որ հաստատեմ զերկինս եւ հաստատեմ կհողմս*». *արժէ՞ր միայն հողմս բառի համար յղում կատարել*։ — *Ի սաստկութենէ֊ն յղում է Գ ճառի ծան*. 12՝ «*Համմտ*. "Պատկեր" 1893, N° 541, Նորայր Բիւզանդացի, *Քննութիւն Մալխասեան հրատարակութեանց Ագաթանգեղոսի եւ Ղազարայ Փարպեցւոյ, էջ* 167 (*տե՛ս «Ծուչարճան*···)»։ *Պէտք էր ընթերցողին ասել, թէ ի՛նչ կայ*

© National Library of Armenia

այդ երկու աղբիւրում, քանի որ ամէն մարդ չունի դրանք: Մենք ունենք երկրորդը· նշուած էջում գտանք, որ ըստ Նորայրի (որի անուան մէջ պակասում է Ն·), մի ձեռ· ունի ի սաստկութենէ, փխ տպ· ի հաստատութենէ: Միւս կողմից՝ Նորայրը պահպանել է տպ–ի յամպս, որ հրատարակչի սրբագրութիւնն է: Ա.րդարեւ, քննական բնագրի ամպս մեզ համար ստոյգ եւ յստակ չարահիւսական պաշտօն չունի, թէեւ ծան· 13–ում ասուել է՝ «ինչպէս երեւում է բնագրից, միմեանց բախւում են ամպերը եւ ոչ թէ հողմերը՝ ամպերին»: Այս իմաստն ստանալու համար անհրաժեշտ էր ամպ[f] ուղղականը փխ ամպս յոգն· հայցականի: Առաջարկում ենք· «ի սաստկութենէ հողմոց, որ[f] բախ[ե]ն ամպս, ի սաստիկ բռն[ութենէ] հողմոցն, յորժամ հարկանիցին յերեր[u], [ի] դուս ամպոցն ճայթէ հատանի ճայթիւն որոտմանց»:

101. 78.4-5 *«Որ մեծաւ պաւրութեամբ* բարձր *ի ձայն աղաղակէ»*· բարձր–*ը* զաւրութեամբ–*ի՞*, *թէ* ձայն–*ի որոշիչն է*: Բարձր *ի ձայն–ին նախընտրում ենք՝* 1 *ձեռ–ի* բարձրաձայն բարբառով–*ը*, *որ կայ նաեւ Ցուզ ԺԳ* 17*–ում*, 1 *ձեռ–ի* բարձրաձայն–*ը*, 1 *ձեռ–ի* բարձր ձայնիւ բարբառոյ–*ն*, *մանաւանդ էջատակում չեղած ի ձայն* բարձր–*ը*· *համմտ*· «ի ձայն բարձր *սկսաւ աղաղակել»* (*Ա. Մակ Բ* 27), «ի ձայն բարձր միաբարբառ *աղաղակէին»*, (*անդ*, *Գ* 50) *եւ այլն*:

102. 79.1 *«Ի սահմանս* յայոց *բնութեանց ջանային հասանել»*· յ– *նախդիրն աւելորդ է, եթէ* այոց բնութեանց–*ը սեռական յատկացուցիչ է, որպէս թուում է*:

103. 79.1-2 *«Անդունդ ի խորոց կոչէին բազում ջուրքն»*· *մեզ համար անհասկանալի է, ի տարբերութիւն տպ–ի*, «անտուստ *ի խորոց կոչէին* բազում *ջուրքն» նախադասութեան, որ իմաստ ունի*, կոչէին–*ը կրաւորական է*: Ձեռ–*եր ունեն* անդուստ *եւ* անտուստ, *որոնցից մէկը պէտք էր ընտրել, փխ* անդունդ*, որ ընթերցողին բան չասող ծան· ունի վերջում* (*ծան*· 16):

104. 79.11-12 *«Որ* [...] *հնարագէտ տեղեակութեամբ* մարքիցին հայիլ *ընդ իրսն»*· մարքիցին–*ը սխալ է փխ* մարքիցեն*, քանի որ բայը* մարքեմ *է, եւ այստեղ ներդործական սեռի իմաստ ունի*: — Հայիլ–*ի փոխարէն դասականն է* հայել:

105. 79.15 *«Ի մեր* բանիս *չիք ինչ մտացածին ստայաւդ»*· ճիշտն է բանս, *որ* 1 *ձեռ–ում է*: *Հրատարակիչը մեզ զարմացնում է դասական դրաբարի իր աղաղակող անտեղեակութեամբ*: Գուցէ բանիս *վրիպակ է*:

106. 83.7 *«Եղ Աստուած* յընտեմարանս *երկրի»*· ճիշտն է ի շտեմարանս, *թէեւ էջատակում չկայ, քանի որ գոյականը շտեմարան է, բաղաձայնով սկսուող*: Նոյնպէս 100.7 յընտեմարանս:

107. 83.9 *«Զի գետ մի, որ անուանեալ կոչի Հինդոս, յարեւելից, ասեն, ելանէ»*· զի–ն *պարբերութեան առաջին բառն է, եւ նախադասութիւնը պատճառի պարագայ չէ*· *ի՞նչ է նշանակում* զի–ն, *որ դուցէ* [որպէս] *զի էր «ինչպէս որ»*:

108. 83.17 *«Գետք ելանեն ի կողմանս հիւսիսոյ եւ գան...»* *ճիշտը երկու ձեռ–ում է՝ ի կողմանցն, քանի որ* ելանել–*ը բացառական է պահանջում, ինչ*· *տ*· 9–10 «յարեւելից, *ասեն, ելանէ»*, *տ*· 12 «ի միջոյ *յարեւելից ելանեն» եւ այլն*· ելանել–*ը «գալ» չի նշանակում ներդոյական հոլովով*:

109. 84.11 «Բազումք *գետք խառնին»*· *ճիշտն է* բազում, *թէեւ էջատակում չկայ, բայց տպագրում է, եւ տ*· 12 «բազում *գետք են» եւ այլն*: *Ա.ետաբաններում նախադաս* բազում *որոշիչը յոգնակի ուղղական որոշեալին չի համաձայնել*:

110. 84.13-14 *«Ընդ Քուշանաց աշխարհն անցանեն, եւ գան աստ ի մերում ծովուս մտանեն»*· *պէտք է ուղղել յուն*· *քնագրի համաձայն մեր ընդգծածը, քանի որ գան եւ մտանեն բայերը չեն կարող ներդոյական խնդիր առնել*: *Հնարաւոր է՝ «... անցանեն* [ ] *գան աստ՝ ի մերում* [աշխարհի] [եւ] [ի մերում], ի ծով[ ]ս *մտանեն», կամ «ի մեր ծով[ ]ս մտանեն»*· *եւ այլն*:

111. 85. 10-11 *«Ա.ն անդր Թողցուք զանհամ իմաստութիւն յուսպա՝* [զ]ստայաւդ[ ]ն· 93. 13-16 *«մտացածին* ստայաւդ բանիցն *յուսպա՝* [զ]ստայաւդ[ ]ն· *ընդգծուածը եթէ յուսացք–ի որոշիչն է, ստայաւդացն, որ* 1 *ձեռ–ում կայ· եթէ իմաստութիւն–ի որոշիչն է, նաց ստայաւդացն*· *ի՞նչ հաւանութիւնք* ստայաւդացն... *ունին*... *ստաբան բանից*: *Քանզի հաւանութիւնք ստայաւդացն... նից ստայաւդացն»*: *Ուստի՝ «յունաց ստայաւդացն» հաւանաբար*:

112. 86. 2-3 *«Ա.յսպիսի կարծր եւ ծանր խստութիւնք* զերկիրս *հաստատութենէ յայտ առնեն»*· *մէկ ձեռ*· *ունի* խստութիւն զերկրիս, *որի* զերկրիս *սեռականն է անհրաժեշտ հայցականի փոխարէն*:

113. 86. 6-10 *«Ըստ համեմատի թեթեւութեան վերին վայրացն* բարիոք էառ *զթեթեւ տարրն ի պատշաճս պիտոյից, եւ վայրքն, որ պատեալ եւ մեկնեալ են ի նմա, նուրբ եւ պարզ, եւ յստակ են եւ զովացուցիչ ի վեր հայլին զնացք իւր, որ եդաւ լինել»*· *անկեղծօրէն ասած՝ զրեթէ բան չենք հասկանում*:

114. 86. 19-20 *«Եղ արարիչն զերկուսին յիւրում տեղւոջ»*· *չորս ձեռ*· *ունեն ճիշտ* յիւրաքանչիւր *բառը փխ* յիւրում, *որ յարմար է* զերկուսին–*ի հետ*:

© National Library of Armenia

115. 87.17 «Զոր ծծէ այսչափ խոնաւութեանց *ջուրց*». *տպ–ն ունի* որ, *սակայն, այնուհանդերձ, նախադասութեան շարահիւսութիւնն ու իմաստը մեզ համար պարզ չեն, ինչպէս չատ այլ տեղերում:*

116. 88.7 Կռուիցեն· *թառաբանները կռուեմ–ը յղում են կըռուիմ–ին, որ սովորական խոնարհումն է, եւ այստեղ մէկ ձեռ. ունի* կռուին, *որ ճիշտն է:*

117. 89.10-11 «Զի եթէ *յորժամ փայտ* զփայտ շփի, *հուր ծնանի*». *տպ՝ Է փխ եթէ, որ նշուած չէ էջատակում. ուրիշ տեղերից էլ է պարզուում, որ քննական բնագրի հեղինակը լրիւ չի ներկայացրել տպ–ի այլընթերցումները: Անկարելի է զփայտ հայցականը շփի կրաւորականի հետ: Կա՛մ* զփայտի *(տրական, ինչպէս «Զարկան զգետնի» յայտնի նախադասութիւնը Ագեռարանում), կա՛մ* ընդ փայտի, *ըստ Նշխ–ի շփեմ բառայօդուածի՝ «Յորժամ փայտ ընդ փայտի շփի, հուր ծնանի» (վեցօր. պ.):*

118. 89. 16-17 «Զամենայն *ինչ, որ բարւոք* կազմեցաւ». *էջատակում չկայ, բայց ճիշտն է* կազմեցաւ:

119. 89.18 «Փոխէ գնացս *արեգական*». *ճիշտն է* [զ]գնացս, *որ էջատակում չկայ:* 90.4 «զգնացս *իւր*»:

120. 90.13-14 «զքաղցունսն... զբաւնձրուսնս *եւ զծանուսնսն*». *նախընտրելի է 4 ձեռ–ի* զբաւնձուսնս:

121. 90.15 «Զպղտորեալն աւնդրէն *թողու*». *ճիշտն է* աւնդէն, *որ ձեռագրերում է, քանի որ* թողու–ն *ուղեւորման հայցական չի պահանջում, եւ ոչ էլ այստեղ* աւնդրէն–ը «նորից, *դարձեալ» է նշանակում: Նոյն սխալը կայ տոլի չարունակութեան մէջ՝ «եւ որ* աւնդրէն *մեկնեալ մնան՝ են աղիքն». ի դէպ,* (՝)–ի *փխ* (,) *է պէտք:*

122. 90.17-18 «Զայս ասացին ի ծովէ». *ճիշտն է երեք ձեռ–ի* զծովէ–ն՝ «ծովի *մասին»: Աստուածային բայերը, ինչպէս չատ յայտնի է, զ– նախդրով բացառական անուղղակի խնդիր են առնում:*

123. 94.1-3 «Իբրեւ նոքա *մարտ եղեալ ընդ միմեանս կռուիցին, մեք միանչ լուռ եւ խաղաղ նստիցի՞մք, լի՞նցուք տեսողք մարտին». (՞)–ներն աւելորդ են, քանի որ* 93.18 «Եւ մեզ անկանել *յաշխատութիւն... իբրեւ գործ իմն աւելի համարիմ»: — Միանչ–ի փխ յաւրմար է ձեռագրերի* ինչ–ը:

124. 94.12 «Այլով *բանիւք»*. *ճիշտն է 5 ձեռ–ի* այլովք–ը:

125. 94.17 – 95.12 «Ասացուք *դարձեալ եւ ընդդէմ* ուրումն, որ *յեկեղեցւոյ է եւ դանդաչէ [...] ասէ* [95. 1, 3, 4, 8]: Եւ *վասն այնորիկ, ասեն, կոչեցաւ ծով». ըստ նախորդ եզակիների՝ ասեն–ը պիտի լինի ասէն կամ ասէ, որ էջատակում չկայ:*

126. 95-96 «Ասացաւ զվերնոյն, *թէ փառաւորիչք են [...] դիցուք զնոսա զխաւսնոց բնութեան». ճիշտն է երեք ձեռ–ի* զվերնոցն *յոդնակին (1 ձեռ. էլ ունի* վերնոցն), *ինչպէս վկայում են «փառաւորիչք են» եւ զնոսա:*

127. 97.2-3 «Զուրքն, *զոր անուանեաց խոստոթալս* բանդագուշեալ, *փառաւորիչք են Աստուծոյ». բանդագուշեալ յոգնակին, որի* շեալ, *փառաւորիչք են Աստուծոյ». բանդագուշեալ յոգնակին, որի* շեալ*, փառաւորիչք են Աստուծոյ». բանդագուշեալ յոգնակին, որի* շեալ, *

սխալ կէտադրութիւնը խանգարում է իմաստին. պիտի լինէր՝ «եւ ասաց, ասէ, Աստուած, "Ժողովեսցին..."», ինչպէս է 125.1-ում: ԷՋատակում նշուած է Ծն Ա. 1, 9, 10: Աբդ, 9-ում կարդում ենք. «եւ ասաց Աստուած, Ժողովեսցին...», որով պարզւում է, որ ասէ-ն է պատմող բարսեղ կեսարացունը, եւ ոչ թէ ասաց-ը: Համմա. «եւ ետես, ասէ, Աստուած, զի բարի է» (97.7):

133. 104. 7-8 *«Բազմութիւնք ջուրցն ծածկեալ ունէր զերեսս նորա». ճիշտն է երեք ձեռ-ի բազմութիւն եզակին ունէր եզակի բայի հետ:*

134. 104. 17-18 *«Իսկ յորժամ զատեն (ջուրքն) տեղի զառ ի թափ, իսկ եւ իսկ իբր սկսանին չարժիլ գնացք նորա՝ յորդեն ստիպեն յորդութիւնք բազմութեանց նոցա». նորա եզակիի փխ, որ անյարիր է չկրկնուած ջուրճն ենթակայի հետ, ճիշտ է չորս ձեռ-ի նոցա-ն, որ բնագրի նախադասութեան վերջում էլ կայ:*

135. 105. 4-5 *«Ամենեքին զմիմեանս ստիպեն երագընթացք գնացիւք». ըստ մեզ՝ երագընթաց, որ մէկ ձեռ-ում է. չենք կարծում, թէ երագընթացք-ը վերաբերի ամենեքին ենթակային:*

136. 105. 9-10 *«Պատրաստական կային վասն խոնարհադնաց բնութեան նոցա երթեալ հասանել ինքեանք ինքեամբք ի հարթ եւ ի միատարր տեղի». ըստ մեզ՝ երթալ, ինչպէս 6 ձեռ-ում: Տ. 13 «քանզի ոչ ունէին հրաման խաղալ ելանել ի կայանից անտի», երկու անորոշ դերբայ. «Առին հրաման ժողովել հասանել» (105.15), «հասանել բանակել» (108.8):*

137. 105.11-12 *«Այլ ահա գոյր նոցա հարթ եւ միատարր տեղի, եւ յառաջ, քան զհրամանն». (,)-ներն աւելորդ են, բայց դըլխաւորը մէկ ձեռի զհրամանն է, քանի որ տ. 8-ում կայ «լինէր ի վերայ նոցա հրաման». նոյն հրամանն է: Տ. 13 «ոչ ունէին հրաման»-ի անորոշ հայցականը չչփոթել մեր առաջարկած զհրամանն որոշեալ հայցականի հետ. սա յարադիր բայ է, ուր սովորական է անորոշ հայցականը: Տ. 15 «առին հրաման». յարադիր բայ: 105.18 «հրամանաւ Աստուծոյ առին ջուրքն զգնացս իւրեանց». մէկ ձեռ. ունի հրամանաւն, որ նախընտրելի է նոյն պատճառով: — 106.4-5 «Մինչչեւ առեալ էր յԱստուծոյ հրամանն...». ճիշտն է մէկ ձեռ-ի զհրամանն, զ- նախդրով, քանի որ յօդ ստացած անորոշ կամ առանց զ- նախդրի հայցական անկարելի է դասական գրաբարում. կամ էլ առին հրաման, որպէս յարադիր բայ, որ ԷՋատակում չկայ:*

138. 106. 2 *«Ինքեանք յանձնէ ելանէրցեն միանգամայն խաղալ». բացատրականը նչ. «անձամբ, իրենք իրենցից». քազմաթիւ ձեռագրեր ունեն յանձանց, որ անտեսուել է, քայց տ. 5 «ոչ չարժեցան ինքեանք յանձանց ցուցանել զգնացս իւրեանց»: Նախընտրում ենք յանձանց-ը,*

յօդնակի ենթակայի կամ ստորոգեալի հետ որպէս մակբայաբար գործածուած:

139. 106. 13-16 *«ի սկզբանէ կարգին գան առ միմեանս գյաւելումն եւ զհասարակելն, զբերանալն եւ կացուցանել զկարգ ժամանակացն՝ բաժանմամբ անվրէպ եւ անդադար գնացիւք». ենթական տ. 8 բնութեանց հասկացութիւնն է՝ բնութիւնք: Մեզ մխանգամայն անհասկանալի են կարգին գան բայերը, ըստ որում առաջինը կրաւորական (եթէ կարգ-ի սեռ. տր.-ը չէ), միւսը՝ չէզոք, եւ յաջորդ որոշեալ երեք հայցականները, որոնք կարող են միայն ուղիղ խընդիրները:*

140. 107. 7-8 *«կան արդելեալ ի պաշարանի». ուղղականը հանաբար պիտի լինի պաշարան, որ չկայ բառարաններում. Թոռն. բ, էջ 23, ի պաշարման, որ բացատրել է «պաշարման մէջ», յիշեյնելով, որ մէկ ձեռ. ունի ի պաշարմանի: Ի պաշարման-ը ճիշտ կարող է լինել. տ. 6-7-ում կարդում ենք «ըստ աւրինակի ոտից («խոռոչ, փոս» եւ այլն. ՄՄ) պաշարելոց»:*

141. 107.19 *«որք այսր ի վեր երեւին». տ. 17 «աստ ի վեր դտանել», որի աստ-ը ներգոյականի նշանակութեամբ ճիշտ է, իսկ այսր-ը կամ ուղեւորման հայցականի իմաստ արտայայտողը երեւին բայի հետ անընդունելի է: այլընթերցում չկայ: Համմա. Եղնիկ, 1959, 94.29 (Վենետիկ, 1826, 214) «Անդ որ ի վեր յերկինս խաւարն լինի, ուստի՞ իցէ», որի անդ ի վեր-ը ճիշտ է:*

142. 108. 10-12 *«կալան իւրաքանչիւր կայեանս, որ զատեալ մեկնեցաւ [...] զետեղեցան յիւր կայանի». պիտի ուղէինք իմանալ, թէ ի՛նչ հիման վրայ մերթ կայան եւ մերթ էլ կայեամբ քառն է ընտրում, երբ ձեռագրեր միշտ կայան փխ կայեանս: — Յիւր-ի ինչպէս այստեղ երեք ձեռ. ունեն կայանս փխ կայեանս: — Յիւրաքանչիւր փխ նախընտրում ենք 5 ձեռ-ի յիւրաքանչիւր. տ. 17 «զիւրաքանչիւր տեղիսն»:*

143. 112. 7-8 *«Իբր թէ պէրկս արկեալ զմիմեանց, ունիցին պինդ զմիմեանս». ճիշտն է երկու ձեռ-ի զմիմեամբ-ը, քանի որ զ- նախդրով գործիական խնդիր է առնում արկանել բայը. «Արկան զիւրով գործիական խնդիր է առնում արկանել բայը. «Արկին զենովա քղամիդ բեամբ զամբարչտութիւն» (Սաղ ՀՒ 6), «Արկին զնովա քղամիդ կարմիր» (Մատ ԻԷ 28) եւ այլն: 120.7-8 «Գէրկս արկեալ պատեալ կայցէ զգամահաւն»:*

144. 118. 1-2 *«Ինչ որ կազմեալ կայցեն ի քնութեանցն եւ անկանիցին ընդ աղղմամբ». ինչ որ ենթական եւ կայցեն ու անկանիցին, մէկը՝ ենթական, եզակի, միւսը՝ ստորոգեալը, յօդնակի, չեն հա-*

© National Library of Armenia

մապատասխանում դասական գրաբարի չարահիւսութեան: Ինչ–ը *կարող է եղած լինել* ի[rf]:

145. 118. 7-8 «*Իւրաքանչիւր ոք ի նոցանէն ընդ զաւրութիւն իւրոյ ընկերին հաղորդեալ են*». *իւրաքանչիւր ոք ենթական պահանջում է, որ ուժ ձեռագրում է*: — «*Հետ*» *իմաստով ընդ նախդիրը եզակիում պահանջում է տրական՝ զաւրութեան, որ էջատակում չկայ*· *տ*· 13–14 «*Մի իաբանի զարձեալ եւ ջուրն ընդ աւդոյ*»· *տ*· 16–17 «*Մերձաւոր է ջուր ցրտութեամբ ընդ երկրի եւ խոնաւութեամբ ընդ աւդոյ*»· 119. 1-2 «*կապեալ կայ ընդ աւդոյ* [...] *եւ հաղորդեալ ընդ երկրի*»:

146. 119.16-17 «*Աստուած ոչ եթէ աչաց տեսլեամբ հայի ընդ պեղեցկութիւն արարածոցն իւրեանց, այլ*...»· Աստուած *եզակի ենթակայի դէպքում ճիշտն է իւրոց (փխ իւրեանց), որ* 5 *ձեռ–ում է*:

147. 119. 18-19 «*Որոց յուրախարար հանգիստն իւրեանց ծածկեալ կայ պեղ վայելչութեան իւրեանց*»· ծածկեալ կայ–ն *պահանջում է ներգոյական տեղի պարագայ՝ հանգստեան, որ մէկ ձեռ–ում է, կամ յոգնակի ներգոյական՝ հանգիստսն, որ մէկ ձեռ–ում է*· 120. 12 «*Որ ծածկեալ կայ յիմիբն*»:

148. 120. 3 Նարաւտոց· *գրաբարի բառարաններում յոգն*· *սեռ*.–*տր*.–*ը* նարաւտուց (*կամ* նարաւտաց) *է, ինչ*· *տպ–ում եւ Թոռնեան, Բ, էջ* 26–*ում է տրբագրուել*:

149. 122. 12 «*Ծուցիչ զաւրինակ մի*»· *Թոռնեան, Բ, էջ* 28, աւրինակ *մի, որ կանոնաւորն է որպէս անորոշ հայցական մի անորոշ ածականի հետ*: *Այս անկանոնութիւնը հատ ու կենտ երեւում է այլուր, ինչպէս Եզնիկ*, 1959, 128. 24 «*ապականեալ զկոյս մի*» (*Վենետիկի տպ*· *էջ* 296):

150. 122-123 «*Ունիմ աւրինակ ի նաւավարաց, որ թէ պակասիցէ ջուր ի ծովու, առնուն զջուրս ծովուն զաղիս եւ զդառն*»· որ–*իցէ յետոյ* (,) *է պէտք*: *Բայց այստեղ Թոռնեան, Բ, էջ* 28 *տպ–ի* որ–*ի փխ ունի* որոց, *որ* 7 *ձեռ–ում էլ կայ եւ կանոնաւոր է որպէս պակասիցէ–ի խնդիրը*: — *Անկանոն են իրար զջուրս յոգնակին եւ զաղիս ու զդառն եզակիները*· *բացի այդ, նոյնիսկ եթէ զաղիս եզակին կանոնաւոր լինի, զդառն բառը եւս պէտք է յօդ ունենայ, ինչպէս զաղիս*: *կանոնաւոր է՝ կա՛մ զջուրս եւ զաղի[u] ու զդառ[իս], կա՛մ զջուր[ն] (կամ զջուր) ու զաղիս եւ զդառն[ն]*: *Այս առաջարկները չկան էջատակում*:

151. 123. 3 «*Դնեն սպունդս մեծամեծս* խուփս *կաթսայիցն*»· *Թոռնեան, Բ, էջ* 28, *ունի ի* խուփն *տպ–ի լոկ* խուփն–*ի փխ*· *բայց քանի որ կաթսաիցն յոգնակի է, եւ ամէն մի կաթսայ իր խուփն ունի, ուստի՝* [i] խուփս *ներգոյականը*: *Բնագրի սպունգս եւ* խուփս *կարող են լինել կրկնակի ուղիղ խնդիրներ՝ «սպունդներ դնում են որպէս խուփեր»*· *բայց կրկնակի խնդրի դէպքում պիտի լինէր* [q]սպունգս· *մէկը լինում է որոշեալ, միւսը անորոշ հայցական*: *Ողջմտութիւնը թելադրում է, որ սպունդները չէին կարող փոխարինել խուփերին, այլ դրւում էին խուփերի հետ*:

152. 123. 17-18 «*Գտանեն ի պատճառս նորա զպէտս կարաւտութեան կենաց իւրեանց*»· *Թոռնեան, Բ, 29, ի պատճառս, երեք ձեռ*.՝ ի պատճառսն: *ՆէՀ* (Պատճառ) ի պատճառս, *որի վկայութիւններըը դասական են, կամ ի պատճառ (Նարեկացուց) նշ*· *է «յաղագս, վասն»*: *Տ*· 12–13 «*Իարի եւ պեղեցիկ է զարձեալ ծով, զի է պատճառ բարւոյ*», *որը նոյնպէս ենթադրել է տալիս ի պատճառս անեզականը կամ յոգնակին*:

153. 124. 12-13 «*Ի նոյն հոգալ եւ ի նովին վերակոխել*»· նովին *դործիականը երբեք չի կարող ի նախդրի հետ դործածուել*: *Տպ–ը եւ ձեռագրեր ունեն ի նոյն, բայց հաւանաբար ճիշտն է նովին–ը բերւակոխել «փորձել»–ի հետ*:

ՃԱՌ Ե

154. 126. 10 զարեգակնէ· *քանի որ եզ*· *սեռ*.–*տր*.–*ը արեգական է, ապա կանոնաւոր եւ դասական եզ*· *բացառականը պիտի լինի եւ է արեգականէ*: Արեգակնէ–*ն*, –*ա*––*ի ազմամբ, միջնադարեան է, երբ դասական բաղանիք–ը դարձել էր բաղնիք*:

155. 127. 16-128 «*Եթէ իցէ ինչ ի խոտոցն եւ յարմատոց, որ յայլ իրիք ի պէտս իցէ, սակայն այլովք իրաւք ի մեր չահ, եւ ի լրումն պիտոյիցն մերոց, թէ եւ կերակուր իցէ, սակայն այլովք իւիք եւ իցէ, մեզ աւգտակար է ամենայն ինչ*»· *եթէ այլ–ը իրիք–ի որոշիչը է, ապա պիտի լինէր* այլ[ոյ]: — Այլովք իւիք–*ի փխ ըստ մեզ պիտի ընտրուէր ձեռագրերի* այլովք իրաւք–*ը, ինչպէս նախադասութեան նախորդ մասում*: Այլովք *յոգնակին չի կարող իւիք եզակիի որոշիչը լինել*: *Իսկ իւիք–ը չի կարող լինել յոգնակի որոշեալի որոշիչը, եթէ* այլովք իւիք–*ի մէջ իւիք–ն է որոշիչը*:

156. 128. 11-13 «*Բազում եւս եւ այլ ազգ են խոտոցն, որ ոչ ունին ի ծայրս հասկացն իւրեանց սերմանիս*»· ազգ–*ն այստեղ նշ*· «*տեսակ*», *ուստի հաւաքական անուն չէ, որպիսին է* ազգ «*ցեղ*» *գոյականը*· *ուստի են յոգնակի թայի ենթական պիտի լինի* ազգ[f], *որ էջատակում չկայ*: *Նոյն սխալը՝* 149. 9: — Հասկացն *բառի փխ նախընտրելի է ձեռագրերի* հասակացն, *քանի որ բոլոր բոյսերը հասկեր չունեն*· *տ*· 5–6 «*Եղեգան սերմն ոչ պոյ, եւ ոչ սիզոյ, եւ ոչ կեր չունեն*· *տ*· 5–6 «*Եղեգան սերմն ոչ պոյ, եւ ոչ սիզոյ, եւ ոչ կեր չունեն*· 139. 8 «*կարքմի, եւ ոչ պրտուի*», *որոնք հասկեր չեն ունենում*· 139. 8 «*կատարեալ ամմամբ* հասակացն *սերմանցն*»:

© National Library of Armenia

157. 130. 10 «*Նայեցուք այսուհետեւ եւ ընդ մարդ ի ժամանակ ողջութեան*». *Ճիշտն է ձեռագրերի ի ժամանակի ներդրյականը*:

158. 130. 18 «*Մնկի ծիւրի ի հիւանդութեան ջերանի յախտի*». (,) *պէտք է ջերանի–ից առաջ, նախընտրելի էր նաեւ ծիւրի–ից առաջ*:

159. 132. 2-3 «*Քարոզքն առաջի աղաղակեն, մի ի մի ղղեղղեղեալ բարբառն նուադեն*». *Ի՞նչ է նչ. մի ի մի. տպ–ի եւ Թոռնեանի, Բ, էջ 32–ի մի մի–ն նախընտրելի է*:

160. 133. 1 «*Բառնայ կեանք հպարտացելոյն*». *Նախընտրելի է տպ–ի բառնան յոզնակին կեանք անեզական ենթակայի հետ*:

161. 133. 5-6 «*Նմանեցոյց մարգարէն Աստուծոյ զվիտս մարդկան ծաղկի խոտոյ, որ ընդ ծաղկելն անդէն վաղվաղակի խամրին*». *Նախընտրելի է երեք ձեռագրի խամրի–ն, մէկ ձեռ.՝ խամրքի: Խամրին–ի մէջ –ն–ն կարող է միայն յօդ լինել, բայց ի՞նչ պատճառով*:

162. 134. 8-9 «*Զի զբոյսս ի վեր երեւեցուսցէ, եւ զարմատն ի ներքս պնդեսցէ, եւ լաստ թուոյ արմատոցն...*», *եւ '–ից առաջ (,) պէտք չէ, քանի որ նոյն ենթական է: Նախընտրելի է զարմատս յոզնակին, ինչպէս վկայում են արմատոցն եւ տ. 12 արմատին, թէեւ էջատակում չկայ*:

163. 135. 8 «*Ի երկիր անկեալ*». *Ճիշտն է յերկիր, թէեւ էջատակում չկայ: Թոռն. Բ, 36, ի յերկիր*:

164. 138. 14 «*ի վնասակարացն անտի*». *կա'մ –ն յօդը, կա'մ յաճախ նրան փոխարինող անտի–ն աւելորդ է*:

165. 139. 5-6 «*Ոչ առ ժամայն վաղվաղակի իբրեւ եղեւ հրամանն կազմեցան պտուղքն ընդ բոյսսն, այլ նախ բոյսքն արձակեցաւ*». *Նախընտրելի է միասին դրուած առժամայն–ը, քանի որ ժամայն–ը ածանցաւոր է: — Այստեղ էլ, ինչպէս շատ նախադասութիւններում մէջ, կէտադրութիւնը թերի է: — Գլխաւորն է արձակեցա[ն], քանի որ բոյսքն պէտք է յոզնակի մնայ, հակառակ որոշ ձեռագրերի բոյսն եղակիի: Արձակեցաւ–ը պուճէ վրիպակ է*:

166. 139. 9-11 «*Որպէս ուսաք ի հրամանէն Աստուծոյ՝ զնոսն կարդ ունի եւ կայ ի գնութեանն ամենայն իւիք, որ հաստատեցաւ*». *Աստուծոյ՝–ի (՝)–ը պիտի լինէր (,): Դրանից յետոյ եկող բառերի մէջ դժուար թէ որ–ը լինի ունի եւ կայ ստորոգեալների ենթական. դուցէ իւիք–ը պիտի լինէր [ինչ], ենթակայ. իմաստը յստակացնելու է յուն. քնադրով*:

167. 141. 4 «*Ապա առնի զցորեանն կատարեալ*». *զցորեանն հայցականը անյարիր է առնի կրաւորականի կամ կրաւորակերպ չէզոքի հետ. Ճիշտն է առն[է] կամ []ցորեանն. ազդուել է Մրկ Դ 28 «Երկիրն ինքնին բերէ պտուղ. նախ զխոտն եւ ապա զհասկն եւ ապա զցոր–*

եանն առաք ի հասկին» նախադասութեան զցորեանն հայցականից:

167ա. 143. 3-5 «*Այս ամենայն վայելչութիւնք կանդնեցան կացին միանդամայն՝ միով ակնարկելով մեծաղաւը զաւրութեամբն*». *Ճիշտն է զաւրութեանն, որ երկու ձեռ–ում է: Հմմտ. «ակնարկելով հրամանին յանկարծակի վաղվաղակի սկսանէր երկիր բղխել զբոյս»* (141. 7-8).

168. 144. 4 «*Որ ինչ պատուական էր ի բնութիսն այն մեզ տուաւ*». *Ճիշտն է քառմաթիւ ձեռագրերի ի բնութեան(ն), եւ (,) է պէտք այն–ից առաջ*:

169. 147. 11-12 «*Սո սէրն մարդկան հաղորդեսցուք ի բարեաւք գործովք*». *ի նախդիրը չի կարող գործիական հոլովի հետ գործածուել. եթէ վրիպակ չէ, աւելորդ է: — Նախընտրելի է երկու ձեռ–ի եւ տպ–ի բարուք–ը*:

170. 149. 10 «*Կէսքն՝ պտղաբեր, եւ կէսքն՝ անպտուղ*». *Ճիշտն է ձեռագրերի պտղաբերք եւ անպտուղ յոզնակիները, ինչպէս տ. 11 զատեալ եւ մեկնեալ, տ. 14 բազմադիմիք եւ բիւրազգիք: Տ. 12–13 նաեւ «գունակք գունակք տերեւովք խուրաքանչիւր», սակայն մեզ թը–ւում է, Ճիշտն է ձեռ–երի գունակ գունակ–ը որպէս տերեւով–ի չհաւում է, Ճիշտն է ձեռ–երի գունակ գունակ–ը որպէս տերեւով–ի չհամաձայնած նախադաս որոշիչը: «Գունակ գունակ ծաղկովք» (159. 14)*:

171. 150. 15-16 «*Իբրու թէ մանկութիւն եւ ծերութիւն երեւի ի նոսա*». *Ճիշտն է երկու ձեռ–ի երեւին յոզնակին երկու ենթակայի հետ: Պատահում է «կոչեցաւ եւ ճիաուս եւ աշակերտքն նորա» (ՁՀՆ Բ 2) տեսակի համաձայնութիւն, որի ստորոգեալի եւ չաղկապուած եղակի ու յոզնակի թուով ենթակաների չարադասութիւնը կարեւոր է: Այստեղ ունենք երկու եղակի նախադաս ենթակայ*:

172. 151. 11-12 «*Ճորժամ վարիցեն առ արմատովքն երիթ պարտ ի պեւկէս փայտէ, եւ վարիցի ոտն եւ մտանիցէ ի սիրտ ծառոյն...*»: *Հրատարակութեան ենք պատրաստել Նորայր Ն. Բիւզանդացու նամակները Վիեննայի Մխիթարեաններին: 1888 թ. մայիսի 8–ին Ստոքհոլմից Հ. Գր. Գալէմքեարեանին գրած նամակում յայտնում է, որ Ագաթանգեղոսի (քննական հրատ.) 67. 7 «վարել ոտուն առուաւբ» արտայայտութեան ոտուն յոզնակի հայցականն ըստ նրան պիտի լինի ոտուն, նոյնը նաեւ, ըստ նրան, վեց–ի տպ–ի այս նախադասութեան մէջ, որը, նրա արտապրութեամբ, Անտոնեան Հայրերի ձեռագրում այսպէս է. «Ճորժամ վարիցի առ արմատովքն ոտն (տպ. ոտուն) պարարտ ի բեւեկնոյ փայտէ, վարիցի ոտնն (տպ. ոտուն), մտանիցէ ի սիրտ ծառոյն...»: Ուրիշ վկայութիւններ էլ բերուց յետոյ նա գրել է: «Ահա այսպէս վեց անգամ ոտն գրեալ տեսնելով յերկու ընտիր պրէսպիրս, հետեւցուցի թէ ուրեմն եւ Ագաթանգեղեայն ուռուն վարել պիտի ըլլայ ոտուն վարել ի հին եւ*

© National Library of Armenia

յընտիր գրչագրի վանացդ»: Այս գրչագիրը Վիեննայի Մխիթարեան կրկնագիր Ագաթանգեղոսի հատուածներն են, ուր, իրօք, կարդում ենք nnուցս: *Ուստի 1911 թ. մարտի 16–ին Նորայրը Հ. Ն. Ակինեանին գրել է. «Ձերես 67 նորատիպ Ագաթանգեղին (քնն. հրատ. ՄՄ), տող 7, գարձեալ սխալ կը գրուի վարել nnուցս, առանց արժէնալու 2 ձեռագրաց տոnուցս ընթերցուածէն: Արդ՝ 23 տարի առաջ հարցուցի ի Մատաքհոլմէ Մեծ. Հ. Գրիգորիսիդ. "Իցէ՞ արդեւք ի կրկնագրի Միսրանուխեանդ nnուցս". եւ ազնիւ Հայրն պատասխանեց 1888 Ապրիլ 17/29 Թուականաւ, Թէ Ձեռագիրդ ունի "կասլիճս երկաթիս ի ծունգս նորա, վարել nnուցս ստուարս". չատ գարմացայ այս ձեր գիւտին վրայ, որուն չգիտեմ ի՞նչպէս հասաք»: Այսպիսով կասկածից դուրս է, որ Վեց–ի nւոն քառը պիտի սրբագրուի nոն: Գարձեալ Նորայրի նամակից Հ. Գր. Գալէմքեարեանին. «Թուի Թէ վերջին գարուց գաղափարողք գի մի' գուցէ nոն չփոխուի ընդ ոամկօրէն անպարկեշտ քառին nւ կամ nոf, սկսած են գոnն դրել nւոն: Իսկ nոն, յդ. nոnուցf, յայտնի է Թէ կը նշանակէ դղ coin («սեպ». ՄՄ) եւ nոnուցս վարել է դղ. enfoncer des coins («սեպեր խրել». ՄՄ): Զարմանալի է որ Նոր Հայկազեանն տեսնելով Թէ ի յունարէն Թարգմանութեան Ագաթանգեղի nւոն (nոն) Թարգմանեալ է սֆի'նա, դղ. coin, չէ կրցած իմանալ զստոյգ նշանակութիւն քառիս»:*

173. 152.14 *«Ճարմաւենիս արուս եւ էգս անուանին, եւ որ էդ արմատենին անուանի...». անուանին կրաւորականի հետ ճիշտը ձեռագրերի արուf եւ էգf ուղղականներն են, ինչպէս ուղղական է յաջորդ էգ արմատենին հոլովաձեւը անուանի կրաւորականի հետ:*

174. 153.8 *«Գոյ Թզենի, որ անուանեալ կոչի կատադենիս». ուղիղն է ձեռագրերի կատադենի եզակին, որ վերաբերում է նոյնպէս եզակի թզենի ենթակային կամ որ–ին: Համմտ. 154.10 «Ասդոի Թզենին քաղցուենի ի կատադենի Թզենւոյ անտի»:*

175. 154.12-13 *«Աղղի աղղի փոփոխմունք գտանին առ այն, որ հաստատեցանն». յոգնակի երկրորդական նախադասութիւնը յուշում է այնս, որ երկու ձեռ–ում է: Տ. 15 «Ո՞վ կարէցէ կալ ի վերայ չափոյ պտղոցն այնոցիկ, որ հաստատեցանն»:*

176. 154-155 *«Կէսք ի պտղոյն [...] եւիւն արեգակամբ, եւ կէսքն ի պտղոցն ժողովեալք...». պտղոցն յոգնակին Թեքադրում է պտղոյն–ի փխ պտղոցն, որ մէկ ձեռ–ում եւ տպ–ում է. կէսf(ն)–ը չի կարող եզակի խնդիր ունենալ:*

177. 156.4 *«Որոյ ոչ իցէ քարի պատճառս արարածոյն իւրոյ». պատճառս քառի –ս–ն յօդ չէ, իսկ հայցականը անյարիր է, փխ պատճառ[ն]:*

178. 156.12-13 *«Ածել զմտաւ զտեսչութիւն արարչին, որ սըփռեալ են ի վերայ արարածոց». մեր ընդգծած եզակին եւ յոգնակին անյարիր են միմեանց. երկու ձեռ. ունեն տեսչութիւնս յոգնակին, որ յարմար է: Այս գոյականը սովորաբար եզակի է գործածւում, ուստի եթէ յոգնակին մերժւում է, ն–ը պիտի լինի եզակի՝ [է], կամ որ[ոյ] սիռեալ [է], յարաբերեալ համարելով արարչին:*

179. 157.15-16 *«Որ ոչ գիտէ զզաւրութիւն այնմ հուզոյ, եթէ ի ծառոյ է». ճիշտն է երկու ձեռ–ի այնր սեռականը որպէս յատկացուցիչ որոշիչ:*

180. 158.1-4 *«Ի մի եւ ի նոյն խոնաւութենէ որթ, զոր ընպէն, ի գինի զարձուցանէ, եւ ճիթենի՝ յիւղ եւ ի միւսում ծառն չորի չոքն ի քաղցրութիւն, եւ ի մէւսումն ջուր զառնայ ի պարարտութիւն». ըստ ձեռագրերի տուեալների՝ սպասելի էր ի ճմին խոնաւութենէ, առանց մի–ի, կամ՝ ի միոջէ եւ ի ճմին խոնաւութենէ. յիւղ–ից յետոյ եւ–ն աւելորդ է. ի միւսում ծառն անկանոնութեան փխ՝ ի միում, քանի որ երկու անգամ միւս չի գործածւում. ջուր–ի փխ՝ նոյն ջուր, քանի որ անկանոն է նախ ջուրն, ապա ջուր:*

181. 158.11-12 *«Ծորժամ մատնեն ի տունկն եւ առնին ի նոցանէ զնաշակս քաղցրութեան». ճիշտն է երեք ձեռ–ի եւ տպ–ի առնուն զնաշակս: Կամ՝ նաշակ[f]. համմտ. ներգործականը, որի խնդիրն է զնաշակս: Եւ 159.6 «Առնի ամենեւին անուշարար* fաղցրութիւն»:

182. 159.3 *«Գայ հասանէ չափ, լինի ամենեւին քաղցրութիւն». ճիշտն է 6 ձեռ–ի ի չափ. ծանօթ արտայայտութիւն է հասանել ի չափ (հասակի): Տ. 6 «Իբրեւ հասանէ ի չափ խաղողոյն»:*

183. 160.1 *«Ելաք արտաfոյ, քան զչափին». ճիշտն է 1 ձեռ–ի եւ տպ–ի արտաfս–ը, քանի որ ելանել–ը ուղեւորման հայցական է պահանջում, եւ արտաfս–ն է համապատասխանում դրան: Այլ գրուածքներում եւս յաճախ են չփոխուած արտաfոյ–ն, որ ներգոյականի իմաստ ունի, եւ արտաfս–ը:*

184. 160.5-6 *«Սակաւ է ինձ աւրս ողջոյն իւրով կատարեալ ժամուք». ճիշտն է մէկ ձեռ–ի իւրովf յոգնակին, ըստ ժամուf յոգնակիի:*

185. 161.1-6 *«Կէսքն ի զարդուցն, որով աչխարհ զարդարեցաւ, կէսfն ի մեր պէտս պատրաստեցաւ, կէսfն ի նոցանէ դարման անասնոց ի մեր պէտս պատրաստեցաւ, որ եղեն ի պէտս բժշկութեանց, եւ [...]: Եւ կէսքն յարմատոցն, որ եղեն ի պէտս բժշկութեանց, եւ ի դարման ցաւոց մերոց պատրաստեցան». ըստ բազմաթիւ ձեռ–երի՝ պատրաստեցաւ, փխ պատրաստեցաւ, ենթական կէսfն յոգնակին է, ինչպէս 2–րդ նախադասութեան վերջում: [ի] դարման, փխ դարման (մէկ ձեռ. ունի ի կերակուր), ինչպէս երկրորդ նախադասութեան*

© National Library of Armenia

մէջ: (,) *է պէտք եղեն–[ից] յետոյ*. ի պէտս բժշկութեանց–ը պատրաստեցան–*ի խնդիրն է, ըստ որում ջնջելու է* եւ ի–*ից առաջ* (,)–ը: Որով–ը *պիտի լինի* որով[f], *ըստ յարաբերեալի*: 2–րդ կէսմն–ը *դրեւլու է* (՝)–*ով, քանի պատրաստեցա*[ն]–ը *չի կրկնուել*:

186. 162.1-2 «*Յաճախեսցէ ի քեզ սէրն Աստուծոյ արարչին* fում». *ճիշտն է* 1 *ձեռ–ի եւ տպ–ի* fոյ *սեռականը*. fում *տրականը անյարիր է* Աստուծոյ՝ արարչին *սեռականի հետ, եթէ երբեք* արարչին *չի նշանակում «արարչի նկատմամբ»*:

187. 162.4 «*Կողոպտին ի տերեւոց* ի ժամ *ամերայնոյ*». ի ժամ–ն *ինքնին սխալ է որպէս ներգոյական, վասն* ի ժամու: *Գլխաւորն այն է, որ այստեղ պէտք է ժամանակ բառը տարուայ եղանակի անուան հետ, եւ ձեռագրեր ունեն* ի ժամանակս *ճիշտ ձեւը: Համմտ.* «ի ժամանակս *գարնանուոյն հասեալք*» (*Սդ* 332), «ի *գարնանուոյն* ժամանակս» (*անդ*, 340), «*զամենայն* ժամանակս *ամերայնոյն*» (*անդ*, 21):

188. 162.5 «*Եւ որք մի՛շտ պտերեւսն ունին*, յանզգաս *փոխեն պտերեւսն*». *ընդգծուած բառը եթէ վրիպակ չունի, հասկանալի չէ. երեք ձեռ. ունեն* յանզգայ, *եւ տպ–ը՝* յայնզգայս, *որ յարմարն է*:

188ա. 162.10-12 «*Ծառ, որ կոչի մխրիկէ, որ* ջրարբին *եւ յոստին է, պի ընդ* ջրարբինս *ջրարբի է, եւ ընդ* յոստինս *յոստին համարի*». ջրարբինս *բացայայտ վրիպակ է անշուշտ, որովհետեւ բառը* ջրարբի *է, ինչպէս նախադասութեան մէջ ունենք եւ բառարաններում: — Բառարաններում* յոստին *բառը յղւում է* ոստին *բառին, որ միակ ճիշտ ձեւն է ըստ Հրաչեայ Աճառեանի «Հայերէն արմատական բառարան»–ի. արմատն է հնխ.* ozd– «*այրել, չորացնել*»: *Բարբառներ ունեն* օստին, վոստին, վօստին: *Ուստի ձեռագրերի* յոստին–ը *պիտի սրբագրուէր* ոստին: *Երկու ձեռ. ունեն* յոստինսն, –ն *յօդով, ինչպէս յօդ ունի* ջրարբինսն. *կա՛մ երկուսն էլ յօդով պիտի լինէին, կա՛մ առանց յօդի, քանի որ երեք ձեռ. եւ տպ–ն ունեն* ջրարբիս: *Նոյնը պիտի ասենք նաեւ* ջրարբին–*ի մասին, քանի որ* յոստին–ը *յօդ չունի, թէեւ չաղկապուած համադաս անդամներից չատ յաճախ միայն առաջինն է յօդ ստացած լինում*:

189. 162.13 «*Որ ունիցին զղործս իւրեանց* զչարութիւն *յերկուս կերպարանս*». *ճիշտն է կա՛մ երեք ձեռ–ի* չարութեան *սեռականը, կա՛մ երկուսի* զչարութեան *սեռականը, որի առաջ կրկնուել է* զգործս *յատկացեալի* զ– *նախդիրը: Սովորական է գործ* չարութեան *արտայայտութիւնը*:

190. 163.5 «*Զոր եդաւ ի նմա*». *դարձեալ այստեղ էլ անյարիր են զոր ուղիղ խնդիրը եւ եդաւ կրաւորականը. այլընթերցում չկայ*:

191. 163.6-8 «*Եւ ի նմն ի ծնունդ խոտոց* յարմատոց *եւ սերմանեաց եւ ծառոց եւ սմենայն* ազգաց *անցանէ ի վերայ մեր ըստ*

առաջին նմանութեանն». *մեր կարծիքով՝ աւելորդ են երկու ի նախդիրները, եւ ենթական պիտի լինի ծնունդ–ը: Խոտոց բառից յետոյ աւելորդ չէ երկու ձեռ–ի եւ–ը: Բացի այդ, յարմատոց բացառականը պիտի լինի սեռական, ինչ. սերմանեաց, ծառոց եւ ազգաց:*

192. 164.2-3 «*Զի տնկեալ լիցուք ի տան Տեառնն եւ ի գաւիթս* սուրբ *Աստուծոյ մերոյ*». *եթէ* սուրբ–ը ի գաւիթս *խնդրի ետոդաս որոշիչն է, ապա երկու ձեռ–ի* սուրբս *յոգնակին է ճիշտ, կամ* 1 *ձեռ–ի եւ տպ–ի* սրբոյն–ի *սեռականը: Զենք կարծում, թէ* սուրբ–ը Աստուծոյ *յատկացուցչի որոշիչն է. նոյնիսկ այս դէպքում կը լինէր* սրբոյ, *որ էջատակում չկայ*:

ՃԱՒ Զ

193. 165.7 «*Կէտ եդեալ* ժամանեսցես *ամենեքեան*». *յոգնակի ենթակայով եզակի ստորոգեալը հաւանաբար վրիպակ է, մանաւանդ դէմքերն էլ տարբեր են. յամենայն դէպս երկու ձեռ–երի* ժամանեսցեն–ը *մնացել է էջատակում*:

194. 166.7-8 «*Զիմ* բանիս *քննիցէք, թէ վրիպեցէ ելցէ արտաքս*». *ձեռ–եր ունեն* բանսն, բանս, բանն. *ճիշտն է* բան–ս *եզակին, ըստ յաջորդ եզակի բայերի*:

195. 166.9-10 «*Գուցէ* անցից *ինչ խափք ի պատշաճից ճշմարտութեանն եւ* զանցանելն *իմ վնաս* [...] *մի՛ լիցի*». *եթէ ճիշտ ենք հասկանում, էջատակում ձեռագրեր ունեն* անցից զանցից *կամ* զանցից, *որ ճիշտ է, ինչպէս վկայում է* զանցանելն *բայը զ– նախաբայով*:

196. 167.13-15 «*Լե՛ր* [...] *տեսող պէտպէս տեսչեանց երեւելի արարածոցս, որ* [...] *հաստատեալ կայ*». *էջատակում չկայ, բայց ճիշտն է կամ յոգնակին, նոյնիսկ եթէ արարածոցս անեզական է «արարչագործութեան» իմաստով*:

197. 169.8-9 «*Ծուխէ այնմ կենաց, որ հանդերձեալն է յաշխարհին մշտնջենակաց*». *այնմ–ի փխ* 6 *ձեռ. ունեն* այնց *սեռականը, որ ճիշտն է կենաց անեզականի հետ. ըստ կենաց յարաբերեալի՝ որ–ն ունի յոգնակիի իմաստ, եւ* 6 *ձեռ. ունեն ճիշտ են յոգնակին: Էջատակում չկայ, բայց նախընտրելի է* յաշխարհ[ի]ն *ներգոյականը*:

198. 169.16 «*Ժամանակեայքս այսպէս* վայելուչ *եւ գեղեցիկք իցեն*». *ոչ մի պատճառ չկայ՝ վայելուչ ստորոգելիական վերադիրը, գեղեցիկի, եզակի մնայ. մէկ ձեռ. ունի ի տարբերութիւն մեծի՝* գեղեցիկք, *եզակի* վայելուչք *ճիշտ յոգնակին*:

199. 169-170 «*Զի թէ մեծութիւն չափոյն երկնից մեծասքանչ զարմանալեաւք* անցանեն *ըստ միտս մարդկան, որ կան մնան եւ ոչ անցանեն, ո՞րչափ եւս առաւել*». *նախադասութիւնը սկսւում է Զի–ով*

© National Library of Armenia

եւ վերջանում առաւել–ով. հասկանալի չեն վերջաւորութեան հարցումը եւ սկզբի Զի–ի պատճառը: — Ո՞ր բառն է անցանենք յոգնակիի ենթական:

200. 172.9-14 *«Ոչ ունի ճարտարութիւն մեր բանիս ճախարակեայս զոլորեալ լեզուաւ, եւ ոչ բարբառս՝ վերնաշարդս, այլ ունիմք բանս յայտնիս, ոչ պաճուճազարդ, անաւղուտ բարբառովք, այլ* ուրախարարք *եւ հանգուցիչք ճառիւք, որոց ոչ ի բարբառոց է զեղ վայելչութեանց իւրեանց, այլ ի մեկնակ ճշմարտութենէ անտի ունի զպատիւ փառաւորութեան իւր». սկզբում եթէ ենթական փառաւորութիւն զոյականն է, ինչպէս յուշում է ունի եղակին, ապա երեք ճեռագրի բանս հայցականն է ուղիղ խնդիրը. իսկ եթէ բանիս ուղղականն է ենթական, ապա ունի եղակին պիտի լինի ունին, որ չենք կարծում, եւ էջատակում չկայ: Ճախարակեայս յոգն. հայց. որոչիչը ցոյց է տալիս, որ ճիշտ է բանս յոգնակի հայցականը որպէս ուղիղ խնդիր: — Եթէ ուրախարարք եւ հանգուցիչք ածականները ճառիւք յոգնակի գործիականի նախադաս որոշիչներն են, ապա ճիշտ են էջատակի ուրախարար եւ հանգուցիչ եզակիները. իսկ եթէ բանս ուղիղ խնդրի (յոգն. հայց.) հետադաս որոշիչներն են, ապա պիտի լինէին լրիւ համաձայնած, որ չկայ էջատակում: — Ո՞րն է ունի–ի ենթական. որոց յոգնակին, որի յարաբերեալն ըստ մեզ ճառիւբ–ն է, թելադրում է, որ ճիշտ է էջատակի երկու ճեռագրի ունին յոգնակին, ըստ որում նախադասութեան իւր վերջին բառը պիտի լինի իւրեանց. առանց այս էլ, աւելի ճիշտ է էջատակի իւրոյ–ն ըստ փառաւորութեան սեռականի:*

201. 173.18-20 *«Սոյնպէս են այլք, որ ի մէնջ ասացաւ, եւ Աստուածոյ զաւրութեամբն կարզեալ կան». որ–ի յարաբերեալն է այլք յոգնակին, ուստի՝ ասացան, որ ճեռագրեր ունեն էջատակում: ճիշտ է կան յոգնակին: կամ էլ որ–ը նախապէս որ[պէս] էր, որի դէպքում ճիշտ կը լինէր ասացաւ եզակին որպէս միասդիմի:*

202. 174.3-4 *«Թերեւս ասիցէ ոք, թէ մարթիցէ ի ցոցանէ մեկնել ի միմեանց». ճիշտն է մարթ իցէ [] ցոցա. ցոցա–ն էջատակում է. էջատակում է նաեւ ի, որի իսկութիւնը յայտնի չէ:*

203. 174.6-7 *«Զոր ի մեր ճեռս առեալ է եւ մեք իշխեմք զննացանէ, որչափ կարող եմք ածեմք զմտաւ մեկնել». առեալ–ի փխ նախընտրելի է 6 ճեռ–ի տուեալ–ը (մէկն էլ ունի տուեալ), ներգործական սեռի, եւ տուեալ է–ի ենթական իրականում Աստուած է: — Իշխեմք զննացանէ–ն հասարակ գրաբար էլ չէ. ճեռագրեր ունեն ածել եւ զորոշմունս. ճիշտը մեզ թւում է «իշխեմք ածել զորոշմունս զննացանէ»: — (,) է պէտք է–ից եւ եմք–ից յետոյ:*

204. 174.16 *«Զոր ասէ Սպղմոսին, թէ՝ ...». ճիշտը կը լինէր* [ի] Սպղմոսին *կամ* Սպղմոս[]ն, *ներգոյական կամ ուղղական, որ էջատակում չկայ:*

205. 176.1 *«Ճստակ իցէ երկինք յամպոյ». իցէ եզակի հետ ճիշտն է մէկ ճեռ–ի երկինք եզակին: Զկայ իցեն յոգնակի էջատակում, որպէսզի երկինք ենթական արդարանայ, որքան էլ անեզական լինի:*

206. 177.2-3 *«Լուսաւորքն մեկնել զտիւ եւ զգիշեր հաստատեցան, եւ վերագոյնն ասէ ի լինել զլուսոյն առաջնոյ». մեր կարծիքով՝ «ասէ* [] *լինել* [] *լուսոյն առաջնոյ», այնինքն՝ «ասում է, թէ նախ լոյսն է եղել (կամ ստեղծուել)» նախքան լուսաւորները:*

207. 177.10-11 *«Զի զստուերն, զոր ի տուէ տեսանեմք, սոյն է եւ ի խաւարն, որ լինի ի գիշերի». զստուերն հայցականի փխ, որ ոչ մի ստորոգեալի ուղիղ խնդիրը չէ, պիտի լինի ստուերս, եզակի ուղղական (–ս յօդով), որ էջատակում է: — Ի խաւարն, եթէ ներգոյական է, պիտի լինի ի նախդրով եզակի տրականի՝ ի խաւարի[ն], քանի որ խաւար գոյականը Ի հոլովման է: Իսկ եթէ ուղղական պիտի լինի որպէս վերագրիր, ի–ն աւելորդ է:*

208. 177.19–178.1 *«Ոչ այլ ինչ է գիշերն, այլ ստուեր տարերցս լուսոյն, զի որ ինչ կայ ընդ երեսաց լուսոյն, նա է պատճառ ծրելոյ խաւարին». զարմանալի է, որ գիշերը, իբր, «ստուեր տարերցս լուսոյն» է. տարերցս լուսոյն–ի փխ ճեռագրեր ունեն արարածոց, որ մեզ ճիշտն է թւում: 178.2–ում կարդում ենք՝ «Նոյնպէս լինի եւ գիշերն ի մտանել լուսոյն» եւ տ. 5–ում՝ «խաւար փախստական լինի յերեւել լուսոյն», որոնցից երեւում է, որ գիշերը «լոյսի տարերքի ստուերը» չէ: — Անհասկանալի է ընդ երեսաց արտայայտութիւնը քերականութեան՝ ընդ նախդրի եւ երեսաց–ի հոլովի տեսակէտից:*

209. 181.1-3 *«Երեքաւրեայ ժամանակի յորժամ յստակ եւ պարզ եւ վճիտ երեւեցի պյստակ պարզոյ յայտ առնէ» (լուսին). էջատակում կայ յերեկորեայ, որ հաւանաբար ճիշտն է երեկորեայ քառի տեսակէտից, փխ երեքաւրեայ. ի՛նչ էլ լինի, յ– նախդիրն անհրաժեշտ է. ժամանակի տրականի փխ անհրաժեշտ է եզակի ներգոյական: — (,) է պէտք երեւեցի–ից յետոյ:*

210. 181.13-14 *«Մի՛ եւս ի տանէ վերթալ աշխատել բեայոյզ կամ յանձրեւածին ժամանակի». էջատակում չկայ* [ի] *նախդիրը, որ անհրաժեշտ է ժամանակի տրականի (ներգոյականի) նախադաս որոշիչ բեայոյզ ածականի առաջ, ինչպէս երկրորդ նախադաս որոշիչ՝ յանձրեւածին, ստացել է յաջորդ ժամանակի–ինը:*

211. 182.8 *«Աստուածայինն բանն». մէկ ճեռ. եւ տպ–ը ունեն աստուածեղէն, որ դասականն է, քանզի դասական գրաբարում*

© National Library of Armenia

«Ային *ածականի մասնիկին տեղ* դէն, տր, կան *կը գործածուի*։ *Զ. օր.* Աստուածեղէն, մարդկեղէն, *ո՛չ թէ՝* աստուածային, մարդկայինն» (*Թոռն., Հատ. Բ*, Ֆանի մը տեղեկութիւն, *էջ* 18)։ *Տող* 13՝ «աստուածեղէն *գրոց*»։

212. 182. 14-15 «*Վիճակք իմն, աւեն*, բաժանի *ի նոցանէ*»· *ճիշտն է ձեռագրերի* բաժանին *յոգնակին՝ ըստ* վիճակ *յոգն. ենթակայի*։

213. 184. 1-3 «*Ի* գիտողաց գաստեղագիտութեան *եւ ի մեկնչաց* յաստեղատացն, *ուստի* զծնունդն *բաշխեն քաղում իրք վրիպեն*»· *գոյականաբար գործածուած ենթակայական դերբայների խնդիրը սեռականն է*· «*Ինդիր տեռի ամէնքն ալ հաւասարապէս սեռական կ'առնուն՝ իբրեւ քայի մասն*» (*Վ. Զալըխ.–Ա.յտն.*, Քեր., 415, Դ)· *ուստի՝* []աստեղագիտութեան։ *Համմտ.* «*իրադէտք* իրացս *այսոցիկ*» (209. 5-6)։ *Բացի այս, բնագրով պէտք է ստուգել, թէ ճիշտը որոշ ձեռագրերի* գտաւոյց *կամ* գտողաց–*ը չէ՞*։ — Յաստեղատացն *բացառականը հնարաւոր չէ ի մեկնչաց անդամի կամ բառի հետ. եթէ բառը ճիշտ է, պիտի լինի նոյնպէս սեռական։ Բայց ձեռագրեր ունեն* աստեղագիտացն *եւ* աստղագիտացն, *որ պէտք է ստուգել բնագրով*։ — Զծնունդն *եզակիի փխ յարմար է ձեռագրերի* զծնունդս[ն] *յոգնակին, քանի որ խօսքը մարդկանց ծնունդներին է վերաբերում*։ — Բաշխեն–*ից յետոյ* (,) *է պէտք*։

214. 184. 6 «*Այնպէս* մասունս *կոտորեցին զրոպէսն*»· *ձեռագրեր ունեն* պէսպէս *ու այնպէս եւ ի նախդիր. սա անսպասման պէտք է՝* «*ի մասունս կոտորեցին զրոպէսն*»։

215. 184. 7-8 «*Զոր առաքեալն ասէ, եթէ՝ "յանկարծակի իբր* զգական *թաւթափել"*»· *էջատակում նշուած տեղում՝* 1 *կորնթ., ԺԵ*, 52, *տպագիրն ունի* յականն *ճիշտ ձեւը*· յականն թաւթափել–*ը յայտնի արտայայտութիւն է*։

216. 184. 9-10 «*Որ ծնանի* յայն ի մի, *ասեն, յընդաղաւտ որպէս ժամուն*»· յայն ի մի–*ն անհասկանալի է*· *մէկ ձեռ–ի* յայնմ *ներգոյականը յարմար է, իսկ ի մի–ի փխ ձեռ–եր ունեն միայն, որ նոյնպէս յարմար է*։ — *Ըստ ՆՀԲ–ի՝* ընդ աղաւտ–*ը մակբայ է «մօտաւորապէս»*· *բայց եւ ածական է յետդասական վկայութիւններով, որով կարելի էր ենթադրել թէ նրա յ– դիրը ժամուն տրականի* (՞) *նախդիրն է, որով կը ստացուէր ներգոյական, բայց որպէս–ը խանգարում է*· *ասելի յարմար է «*[] *ընդ աղաւտ որպէս* [ի] *ժամուն»*։ Յայնմ–*ը հաստատում է տ*· 11–*ի «որ ծնանի ի միւսումն» ներգոյականով*։

217. 184. 13 «*Շրջի* տուն ի տանէ *եւ տեղի ի տեղւոջէ*»· *թէեւ էջատակում չկայ, բայց ըստ մեզ ճիշտն է «*[ի] *տուն ի տանէ» եւ «*[ի] *տեղի ի տեղւոջէ»*։ *Սովորաբար լինում է* տանէ [ի] տուն, ի տեղւոջէ [ի] տեղի, *որոնք նոյնպէս մերժելի են*։

218. 184. 15-18 «*Եւ զբոլորակ պատկերացն աստեղատանցն յերկոտասան մասունս բաժանեն, քանզի ըստ թուոյ երեսուն աւուր կազմեալ է* զբոլորակսն [···] *զբոլորակին*»· զբոլորակ *եւ* բոլորակին *եւ վակինները յուշում են, որ ճիշտն է* զբոլորակ[]ն *եվակինը, թէեւ էջատակում չկայ*։

219. 184. 17 «*Արեգակն տարւոյ տարի զայ չուրջ զերկոտասան աստեղատամբքն*»· *ըստ մեզ՝ դասական չէ* տարւոյ տարի–*ն, փխ* [ի տարւոյ ի տարի]։

220. 184-185 «Երկոտասան մասն *յերեսուն մասն բաժանեն եւ զմի մի յերեսուն մասանցն ի վաթսուն ժամս կոտորեն*»· *ճիշտն է երկու ձեռ–ի* գերկոտասան–*ը, որոնք մասն–ի փխ ունեն նաեւ* մասնն, *որ լաւագոյն է*։

221. 186. 14 «*Մերձենալն եւ պատահելն նոցա ի միմեանց*»· *երկու բայերից եւ ոչ մէկը բացառական խնդիր չի առնում. ձեռագրեր ունեն ի միմեանս լաւ ընթերցուածը* մերձենալ–*ի համար, իսկ մի*մեանց–*ը յարմար է* պատահել–*ին*։

222. 187. 9 «*Մքանչանամ ընդ այնց, որ հաւատան նոցա զկեանս իւրեանց*»· *ճիշտն է ձեռագրերի այնս հայցականը* սքանչանալ (*եւ* զարմանալ) *բայի հետ*։ *Տե՛ս դիտ*· 81։

223. 187. 13 «*Զի՞նչ կեանք լինիցի նոցա յաշխարհի*»· *ճիշտն է երեք ձեռ–ի* լինիցին *յոգնակին կեանք անեզական ենթակայի հետ*։

224. 188. 1 «*Մերկանայ* յասրոյ *անտի իւրմէ*»· *քազմաթիւ ձեռագրեր ունեն* յասուէ (*որ դասական հոլովմամբ ճիշտն է*), յասւէ, յասուէն, յասւէ։ *Քերականութիւնները սովորեցնում են, որ* ասր–*ը*

227. 190. 14-15 *«կէսքն երազընթաց գնացիւքն հասանեն զմիմեանս»*. *էջատակում չկայ, բայց ճիշտն է* [ի] (*կամ* առ) *միմեանս*. *հասանել չէզոք բայը որոշեալ հայցականով դրուած ուղիղ խնդիր չի առնում*:

228. 190. 18 *«Ջաւրուքիւնն իմն մեծ ունին գնացք նոցա»*. *իմն անորոշ ածական որոշիչ ունեցող անդամը չի կարող միաժամանակ որոշելիութեան նշան –ն յօդն ստանալ, ոչ էլ անորոշ* (*կամ զ– նախդիր չունեցող*) *հայցականը կարող է յօդ առնել*. *ուստի՝ զաւրութիւն*[] *իմն, հայցական*:

229. 195. 4 *«Մեկնութիւն նշանացն եղեւ կատարումն առաջին բանիւքն»*. *ճիշտն է մէկ ձեռ–ի եւ տպ–ի մեկնութեան, իսկ մէկ ձեռ. էլ ունի մեկնութեանն, որ պոնչ տեռական հոլովի տեսակէտից ճիշտ է*: *կատարումն բառը գոյական է, եւ բնագրի «Մեկնութիւնը... վերջ եղաւ»–ը հայերէնն էէ*:

230. 196. 4-5 *«Մեծասքանչ զարմանալեաւք բաժանին* կարգ *ժամանակացն»*. *ճիշտն է 7 ձեռ–ի* կարգք *յոդնակին* բաժանին *յոդնակիի հետ*:

231. 202. 1 *«Ի վերայ ամենայնի մասանց աչխարհիս ցուցանէ զծագումն»*. *ճիշտն է երկու ձեռ–ի ամենայն–ը, որ մասանց–ի նախադաս որոշիչն է եւ պէտք է անհոլով կամ ուղիղ ձեւով մնայ*:

232. 202. 3-4 *«Որ բնակեալ լոցն անդ յաշխարհին Հնդկաց եւ կամ աստ ի Բրխտանիա աչխարհիս»*. *յաշխարհին հայցականը պիտի լինի տպ–ի յաշխարհիին ներգոյականը, ինչպէս թելադրում են անդ, աստ եւ ի... աշխարհիս, ինչպէս «ի ստորին աշխարհիին հարաւոյ բնակեալ լոցն» (214. 10-11)*:

233. 202. 4-8 *«Մի միակչիւ տեսանեն զծագելն արեգականն, զի ոչ յորժամ գտանէ առ արեւմտեայս նուազի ինչ ի մեծութենէ անդի առ առեւելեայս եւ ոչ յորժամ ծագէ առ բնակչաց արեւելեայց թերի ինչ եւ պակաս երեւեցի բնակչացն արեւմտեայցն»*. *բնագիրը կապ–մողը յաճախ նախընտրել է արեգական գոյականի –ն յօդն ստացած ձեւերը, էջատակում թողնելով անյօդները, մինչդեռ հակառակը պիտի լինէր*: — *Գտանէ–ի փխ* 4 *ձեռ. ունեն մտանէ, որ ճիշտն է, ինչպէս յուշում է ծագէ–ն*: — (,) *է պէտք նուազի–ից առաջ*: — *Առ բնակչաց արեւելեայց–ում բնակչացն աւելորդ է, եւ քանի որ «մօտ» նշանակելու համար առ նախդիրը պահանջում է յոգնակի հայցական, ինչպէս նախադասութեան մէջ առ արեւմտեայս, ուստի պիտի լինի առ* []*արեւելեայ*[*ս*]: — *Ինչպէս արեւելեայց–ը, որից յետոյ՝* [,], *յօդ չունի, այնպէս էլ արեւմտեայցն պիտի լինի առանց յօդի, ինչպէս ձեռագրերում է ըստ էջատակի*: — *Բնագրում գերիչխողը անտի–ն է, իսկ այստեղ կայ անդի, որ դասական ուղղագրութեամբ չէ*:

234. 202. 11-12 *«Մի՛ քան զչափ կանդնոյ միոյ երեւի չուրջանակի չրջան նորա տեսողացն, կարծեսցուք, թէ այնչափ միայն իցէ»*. *մի՛–ից յետոյ անհրաժեշտ է ձեռագրերի վասն զի–ն, որ ենթադրել է տալիս կարծեսցուք–ը*:

235. 203. 13 *«Հանդերձ եզնողաւն, որ վարիցեն զնոսա»*. *Թոռն., Բ, էջ* 56 *«Հանդերձ եզնողաւն որ վարիցէն»*, *որ միակ ճիշտն է, եզակի. պուճէ վարիցեն–ը վրիպակ է*: — *Բնագրակազմողը եզնողաւն բառի ծ. մէջ դրում է՝ «Սրբագրութեան մանրամասները տե՛ս Մուր., էջ* 231–233», *ուր, սակայն, յիշատակուած չէ Թոռն., Բ, էջ* 56–*ի եզնողաւն, որի ծ. մէջ* (ծ. 3) *ասուած է՝ «Դրինք ըստ այլ օր. եզնող, ի, աւ, եղնարած, անպէորդ»*: *Բացի այդ, պ. Մուրադեանն իր նշուած աչխատութեան էջ* 231–*ի ծ.* 59–*ում ասել է՝ «ՆՀՔ, Ա, 647*: *Բառա

քանի որ ներկայացնում է լուանի փոփոխութիւնները: Տ. 21–ում կարդում ենք կենաց մերոց, յոդնակիաձեւ մերոց, անեղականի հետ:

241. 209.5-10 *«Իրաղէտք իրացս այսոցիկ այնոքիկ են, որք ընդ լուսով լուանին ննջիցեն, զի առաւել խոնաւութիւն լինի ի գլուխս նոցա». մէկը կարող է ննջել լուանի լոյսի տակ եւ կրել հեղինակի նշած հետեւանքը, բայց դրանով դեռ «իրաղէտ իրաց» չի դառնայ: Նախընտրելի է Թոռն., Բ, էջ 61–ի «Եւ (որք) իրաղէտք իրացս այսոցիկ են՝ ասեն, որ ընդ լուսով լուանին ննջիցեն, առաւել խոնաւութիւն լիցի ի գլուխս նոցա»: Ուստի իրաղէտներն են ասում, թէ ի՛նչ է տեղի ունենում:*

242. 209.19 *«Ամպ ի վերայ ամպոց դիզանին». մէկ ձեռ. եւ տպ–ը ունեն ամպք, որ միակ ճիշտն է դիզանին յոդնակի ստորոգեալի հետ:*

243. 210.4 *«Մերձաւորք եւ սահմանակիցք են ի ներուցս». ընդգծուածը փնտրակատմողի սրբագրութիւնն է ձեռագրերի եւրոպացւոց–ի վրա. պիտի նկատենք, որ նախորդ երկու դոյականները, թէեւ ստորոգելիական վերադիրներ, տեսական հոլովով խնդիր են պահանջում. թէ չէ՝ կը ստացուի, թէ մերձաւոր եւ տահմանակից են նեղուցներում:*

244. 211.10 *«Ցայսմ փոխուցս, որ պատմեցաւ, ածցուք զմտաւ զմեծամեծ գործս Աստուծոյ». տ. 4–5–ում հեղինակն ասել է «զարմանք այնք են, որ մնացին ի մէնջ» առանց պատմուելու. ուստի նա չատից՝ քիչ, փոքր բան է պատմել իր ճառում: Շարահիւսութեան տեսակէտից ի՞նչ կապ կայ յայսմ, փոխուցս եւ պատմեցաւ, եզակի ու յոդնակի, ձեւերի միջեւ: Ածցուք զմտաւ–ը բացառական խնդիր է պահանջում: Ձեռագրերի տուեալների հիման վրայ վերանայելի է չարահիւսութիւնը:*

245. 212.1-5 *«Բայց անհամ եւ անոտի պատմութիւն, որ ի բերեւ զբարբանջ ծերութեան զառանցելոյ անկելոյ ի մտաց իցեն, անչափ ծաղու եւ արհամարհանաց արժանի են, զի ամենայն ումեք յայտնի եւ երեւելի է, զի ի ստեղծուածոյ մտաց կարկատեն զստայուդ պատմութիւնն». յոդնակի ստորոգեալները պահանջում են յոդնակի պատմութիւնք եւ պատմութիւնս, որոնք ձեռագրերում են: Ձենք կարծում, թէ յոդնակի քայերը մարդկանց են վերաբերում:*

ՃԱՒ Է

246. 217. 4-5 *«Որ Թռչիցին վընդէմ հաստատութեան երկնից ըստ աղդի իւրում». էջատակում չկայ, բայց ճիշտը մեզ Թուում է իւր[եանց], ըստ ենթակայի եւ ստորոգեալի յոդնակի Թուի: Ծն Ա.*

20–ում (աղբիւրը) չկայ «ըստ ազդի իւրում»: 219.2-3 «Բղխեսցեն ջուրք զեռուն կայտառ, չունչ կենդանի ըստ ազդի իւրում», որ ճիշտ է եզակի խնդրի հետ:

247. 218.2-6 *«Ճեպեաց եւ զսակաւանիստ ծովակս՝ քղխել եւ աճեցուցանել, եւ ի միջոյ ամենայն խոնաւութեան քղխեաց կենդանութիւն՝ ազդի ազդի Թռչնոց երկնէր ծնանել: Ծնանի եւ ծով պէս–պէս ազդս եւ կեպարանս զուղակաց եւ գազանաց». հաւանաբար՝ երկնի, քանի որ ունենք «ծնանի եւ ծով» առանց երկնելու: Նոյնիսկ այս բայի դէպքում երկնէր–ը պիտի լինէր երկնել, ինչպէս ծնանել: Տպ–ն ունի յերկնէ:*

248. 218.12-15 *«Ամենայն ջուրք [...] ազգս զեռնոց յիւրաքանչիւր խոնաւութենէ քղխէին, որոց ոչ Թիւ լինէր եւ ոչ համար՝ բովանդակէին». ո՞րն է բովանդակէին–ի ենթական՝ արդեօ՞ք ջուրք, Թէ՞ որոց–ի լռելեայն որք–ը: Փո՞նչ է նշանակում (՝)–ը: Ձեռ–եր ունեն բովանդակէր, որի ենթական կը լինէր համար–ը: Երկու ձեռ. ունեն համարով, որով՝ «եւ ոչ համարով քովանդակէին» (երեք ձեռ. բաւանդակէին): Գոնէ պիտի գրուէր համար առանց (՝)–ի որպէս ուղիղ խնդիր:*

249. 219.14 *Զկոկորդիլոս–ի լ–ն դասական չի կարող լինել. ձեռագրեր ունեն ղ–ով ձեւեր: 220.3 դլփինք, որի լ–ն պիտի լինէր ղ, Թէեւ էջատակում չէ, բայց 224.6–ում մէկ ձեռ. ունի դեղփինք ճիշտը, ե–ով եւ ղ–ով:*

250. 222.10-12 *«Մարմին կարաւտ է զարմանոյ աւդոյ, որ մըտանէ միախառն խառնուածով, եւ լինի իբրեւ կերակուր ի կենդանութեան». ճիշտն է ձեռագրերի ի կենդանութիւն հայցականը «կեանքի համար» իմաստով: Ի հարկէ օդը մարդու կեանքում կամ կենդանութեան ժամանակ է պէտք, սա տարրական է. հեղինակի միտքն այն է, որ օդը կենդանութեան համար է՝ առ ի կենդանութիւն:*

251. 224.1 *«Ի սիկս գեռոց եւ յատակս ծովակաց է խորս տեղիս լինին». ճիշտն է [ի] յատակս, Թէեւ էջատակում չկայ. ոչ մի լուրջ պատճառ կայ, որ յ– տառով սկսուող պոյականների ներդոյականը ի– նախդիր չստանայ: — Ճիշտն է նաեւ խոր եզակին, որ ձեռագրերում է, քանի որ նախադաս որոշիչը չի համաձայնում յոդնակի հայցական որոշեալի Թուին:*

252. 224.18 *«Որ միշտ ի ծով աշխատիցին». ճիշտն է ձեռագրերի ի ծովս կամ ի ծովուն ներդոյականը, քանի որ ծով–ը ՈՒ հոլովման է:*

253. 225.3-4 *«Զամենայն աւտրս կենաց իւրոյ ի խոնաւ բնութեան հանեալ իցէ». ճիշտն է չորս ձեռ–ի իւրոց–ը կենաց անեզականի հետ, Թէեւ սա եզակիի իմաստ ունի: Տե՛ս դիտ. 223, 240:*

© National Library of Armenia

254. 225. 15-16 «*Եւ այսր ամենայնի խառնաղանջ զեռնոց ոչ մի բարք եւ ոչ մի քնութիւնք է*». *եթէ* այսր ամենայնի–ն զեռնոց–ի նախադաս որոշիչն է, *ապա ճիշտն է ձեռագրերի այս ամենայն–ը կամ* այսց ամենայն–ը: — Բարբ *եւ* բնութիւնք *յոգնակի երկու ենթակաների հետ դասական չի կարող լինել է եղակին. պարտադիր է 5 ձեռ–ի* բնութիւն–ը, *եղակին մի «մէկ» որոշիչի հետ. նրա հետ համաձայնած կը լինի է–ն: Լաւագոյնը կը լինէր* [են] *յոգնակին, որ էջատակում չկայ:*

255. 227. 8-9 «*Որ տնանկն է ի մէնջ, հարստին կայ* ի ծառայութիւն». *ճիշտն է երեք ձեռ–ի* ի ծառայութեան *ներգոյականը կալ բայի հետ, ինչ.* «*Զերկոտասան ամ* ի ծառայութեան կացեալ» (*Ծն ԺԴ* 4), «*Ի ծառայութեան կացուցին*» (*Ա. Մակ Ը* 10), «*Ամենեցուն զանձն* ի ծառայութեան *կացուցէր*» (*Ա. Կորն թ* 19): 231. 6-7 «Կացցուք ի *սոյդ* ընշմարտութեանն *եւ յանպաճոյճ* միամտութեանն»:

256. 228. 4-5 «*Պատիժք պատուհասից, որ յայտնելոց է ի վախճանի*». *եթէ* յայտնելոց *է–ն ներգործական լինէր, ապա որ–ը կը լինէր զոր: Եթէ կրաւորական է, ինչպէս կարծում ենք (քանի որ ենթակայ էլ չունի), ուստի ճիշտ է ձեռագրերի* են *յոգնակին՝ ըստ որ*[f]*–ի, որի յարաբերեալը պատիժ կամ պատուհասից է:*

257. 229. 10 «*Զխեցգետնոյ նման է, որ նենդութեամբ մերձենայցէ առ իւր մերձաւորն*». *Պատչէ վրիպակ է ընդգծուածի զ– նախդիրը. ևման–ը տրական է պահանջում՝* խեցգետնոյ, *որ տպ–ում եւ ձեռագրերում է:*

258. 229. 14-15 «*Բաւական համարեսցուք զայն, ինչ որ արդարութեամբ ասացեալ ունիցիմք*». *տպ.ն ունի «... զայն՝ ինչ...», իսկ Թոռն. Բ, էջ* 64, «... *զայն ինչ՝ զոր...*». ինչ որ–ը *աշխարհաբար է, եւ քանի որ* ունիցիմք–ը (*որի դիմաց նախընտրելի է Թոռն–ի* ունիմք–ը) *ներգործական է, հարկաւոր է զոր:*

259. 230. 11-12 «*Կալ մնալ ի միում բանի կամ ի միում խորհրդի ոչ երբէք յաւժարեն, այլ այլ ընդ այլոյ երեւին*». *Թոռն. Բ, էջ* 64–ը *տպ–ի այլ յոգնակին (լռելեայն) ուղղել է այլ, որով ստացուել է չատ յայտնի այլ ընդ այլոյ դարձուածքը, որ նա ծ. 22–ում բացատրել է՝ «կ'երեւին ուրիշ քան եղածը», մինչդեռ բնագրի այլ ընդ այլոյ–ն նշ. «ուրիշներ (երեւում են) ուրիշի (կամ ուրիշ բանի) փոխարէն», որ անհեթեթ է: Ծոդնակի ենթակայի դէպքում էլ այլ–ը մնում է անփոփոխ. «Այլ ընդ այլոյ ի միմեանց մոլորեալք, այլ յեղբաւրէ իւրմէ անջատելով* գրուեցան» (*Մգ* 314. 10-11):

260. 231. 10-11 «*Որպէս եւ զՃակովբ, զի միամիտ էր* յարդարութիւնն»· *ճիշտն է ձեռագրերի* յարդարութեան *ներգոյականը:*

261. 232. 2 «*Որ ի ջուրսն գտանին* ի ծովու». *հաւանաբար* ի ծովու–ն *աւելորդ է. իզուր չէ, որ «ի ջուրսն գտանին» քառերի փխ ձեռագրեր ունեն «չրջին ի ծովու», որի դէպքում* ի ջուրսն *ներգոյականն է աւելորդ դառնում:*

262. 232. 17-18 «*Ոչ ոք համարձակի* յանցանել *յայլոց բնակեաղս*». *ընդգծուածը անցանել բայն է յ– նախդրով, որ աւելորդ է, քանի որ համարձակիմ *բային յաջորդող անորոշ դերբայը ի նախդիր չի առնում, իսկ գոյական խնդիրը դրւում է ի նախդրով հայցական. այս է կանոնը Ս. Գրքի բնագրում:*

263. 233. 13-14 «*Զի* զընկերին զրկել *զլանալ մարթասցուք*». *մէկ ձեռ. եւ տպ–ն ունեն* զրկեալ, *որ Թոռն., Բ, էջ* 66–ը *ծանօթագրութեամբ դարձրել է* զրկել, *որով* զընկերին *փոխանուն սեռականը դառնում է* զրկել *եւ* զլանալ *բայերի խնդիրը: Զընկերին նչ. «ընկերոջ ունեցուածքը», որ ես ե 8–ում է, սակայն հանիցեն *ստորոգեալով՝ «զի* զընկերին *հանիցեն», որ կանոնաւոր է: Զընկերին հայցականը, նշուած իմաստով, չի կարող լինել* զրկել–ի *խնդիրը, քանի որ այս բայի խնդիրը իրի անուն չի լինում, այլ միայն՝ անձի անուն. այս են փաստում Ս. Գրքի վկայութիւնները: Ունենք միայն «Եւ զամենայն ևման, զոր ինչ խնդրեցին աչք իմ, ոչ զրկեցի ի նոցանէ» (*Ժող Բ* 10), նայն, *զոր ինչ խնդրեցին աչք իմ, ոչ զրկեցի ի նոցանէ» (*Ժող Բ* 10), նայն, զոր *ինչ խնդրեցին աչք իմ, ոչ զրկեցի ի նոցանէ» (*Ժող Բ* 10), նայն, զոր

կամ առանց [եւ]–*ի*: *Պատահական չէ, որ* 134. 5-6–*ում կարդում ենք*· «*Արդ՝ յայնմ ծովու յոլով բնակեալ են կէտք*»:

267. 236. 3 «*Նմանիցես*», *չէզոք սեռի, պիտի լինի նմանեսցիս, ինչպէս տալ–ում*:

268. 236. 3-4 «*Գտանիցիս յանցուցեալ զպատուիրանաւն հակառակ արարչին*»· 235. 17–*ում կարդում ենք* «*համարձակիմք* անցանել զպատուիրանաււֆն *Աստուծոյ*»: *Այլ գրուածքներում եւս* անցանել (+ զ– *նախդիր եւ գործիական*) *բայը չի օրինաւորել է յանցանել բայի հետ, որ այսպիսի խնդրառութիւն չունի*: *Թոռն., ֆ, էջ* 68, *ծ*· 25, «"*Գտանիցիս յանցուցեալ* (*կամ* անցուցեալ) *զպատուիրանաւն*": *Ինչ մը վեր՝* անցանել զպատուիրանաււֆ· *այսպէս սովորաբար կը գործածուի*· *ոչ միայն սովորաբար, այլ՝ միշտ*: *Ճարմար չէ նաեւ* անցուցեալ *պատճառականը*: *Չեռագրեր ունեն յանցանիլն եւ յանցանել*· *ընտրում ենք յանցանել = յ– նախդիր եւ* անցանել, *որով գտանիցիս յանցանել զպատուիրանաւն նչ*· «*պատուիրանազանցութեան մէջ կը պտնուես*»:

269. 236. 14-15 «*Զքաղցր ջուրըն, որ են ի նմա, ոչ այնչափ չատ ծծեն* ճառագայթ*ն արեգականն, քանզի ոչինչ կարի յամէ անդ*»· *ի՞նչը ի՞նչ չի ծծում*: *Չեռագրեր թոյլ են տալիս գրել* զքաղցր ջուրս[ն], *որը կը դառնայ ուղիղ խնդիր, եւ ենթակայ կը լինի* ճառագայթ*ն յոգնակի ուղղականը ծծեն յոգնակի ստորոգեալի համար*:

270. 239. 1 «*Զկեանս մեր միշտ դատարկացեալ ի բարեաց գտանին*»· *կրաւորական սեռի ենթական չի կարող լինել* զկեանս *հայցականը, որի փոխարէն ձեռագրեր ունեն* կեանք / կեանմ*ն ճիշտ ուղղականը*:

271. 239. 3-5 «*Ի քէն յարարածիս մերում ունիմք զընտանութիւն հաճոյիցն* զաւտարութիւն *չարութեանցն*»· *տալ–ն ունի յարարածոյս մերոյ, որի յ– նախդիրը ընկելով ճիշտն ենք համարում* արարածոյս *մերոյ, այսինքն՝ «ի քէն արարածոյս մերոյ», ինչպէս* 240-241–*ում կարդում ենք ի քէն արարածոց*: *Եզնիկն ունի "ի քնութենէ արարածոյ»* (24. 21-22): — Արարած–ը ո *հոլովման է, եւ նրա յարարածի ներգոյականն անսովոր է*: *Առաւել եւս յարարածի մերում ներգոյականի հետ յարմար է Գ*· *Նահապետեանի առաջարկած* (*էջ* 231) տնկեալ–ը, *որ կայ չորս ձեռագրում*: — Զաւտարութիւն–*ից առաջ անհրաժեշտ է* (*քանի որ ստորակէտ չկայ*) *երեք ձեռագրի եւ–ը*:

272. 241. 7-8 «*Գայ հնազանդի խառնակել* ամուսնութիւն *ընդ դառնագոյն դաղանին*»· *ճիշտն է ձեռագրերի* յամուսնութիւն–*ը*· *համմտ*· «*Խառնակի ի մեղս նորա*» (*Սիրաք ժբ* 13), «*ի գնացս նոցա մի խառնակիք*» (*Եզկ ի* 18):

273. 241. 11 «*Եթէ* վաղվաղուն *ձեռաւք իցէ առ ի հարկանել···*»· *Նորայր Ն*· *Բիւզանդացին իր «Տեսութիւն Քննական բերականութեան Հ*· *Արսէնի Այտընեան» անաւարտ աշխատութեան մէջ գտնում է, որ* վաղվաղուկ–*ը դասական չրջանից է, «*վաղվաղուկ *կայ յեփր*·, *Համառ*·, *այլ կայ յԱռակս, ԺԲ, 19, ԽԱ, 5*· *Ոսկ*·, *Մտթ*·, *ֆ, 557, Բրս*·, *Վեց*·, 151 (*տպ*· վաղվաղուն, *այլ Անտոնեանց* (*ձեռ*·) վաղվաղուկ» (*ՀԱ* 1987 *թ*·)· *Մատենադարանի թ*· 1657 *ձեռագիրն էլ ունի* վաղվաղուկ (*ըստ տպ–ի տեղեկութեան*): *Ուստի* վաղվաղուն–*ը սրբագրելի է* վաղվաղուկ:

274. 241. 16-17 «*Եթէ իժ վասն սիրոյն, զոր ունի առ մխուխինէս, առանց վնասելոյ են թոյնքն, եւ թերեւս հեղու եւ ընկենու ի բաց զթոյնսն···*»· *ճիշտը մեզ թուում է չորս ձեռ–ի իժի սեռականը*:

275. 242. 14 «*Սուին ճառիւք կամիմ կատարել զքանս, զոր խաւսիմս*»· *քերականութիւնը եւ իմաստը պահանջում են մէկ ձեռ–ի* ճառիւ *եզակին*· *խօսքը է ճառի մասին է*:

276. 243. 1-2 «*Սկիզբն* ականն այն *իբրեւ զղալարի կանաչագեղ բուսանի ի մէջ ծովուն*»· *ճիշտը բազմաթիւ ձեռագրերի* այնորիկ *սեռականն է որպէս* ականն *սեռականի որոշիչը*: *Եթէ* այն–*ը սրա որոշիչը չէն է, ապա չի կարող հոլովով չհամաձայնուել*: *Զենք կարծում, թէ* այն–*ը* սկիզբն *ենթակայի կրկնութիւնն է թարմատարութեամբ*:

277. 243. 3-4 «*Ընդունել* զաւդս *քաղցրաշունչ, սկսանի խըստանալ*»· *ճիշտը երկու ձեռ–ի* զաւդն *եզակին է, քանի որ* fաղցրաշունչ[u] *եռադաս որոշիչը եզակի է*: *կամ՝* fաղցրաշուն[u]:

278. 243. 8-11 «*Աղխաղխեալ կուտեալ կան* [···] *ցանեալք եւ ցրուեալք* [···] *լցեալք եւ զեղեալք* [···] *համբարեալք եւ ծածկեալք*»· *Թէեւ ձեռ–եր չունեն, բայց առաջին երկու անցեալ դերբայներն էլ միաների պէս յոգնակի պիտի լինէին*:

279. 243. 13-14 «*Ի նոցանէն լինի ասրն այն, որ ոչ երթէք ուրեք յիմաստուն նարաւտանաւորաց կարաց* այնպիսի *գոյն ներկանել յաչխարհի*»· որ–*ը կամ* ասրն *գառնում է կարաց··· ներկանել «կարողացաւ ներկուել»–ի ենթական, որ տրամաբանական չէ*: *Երեք ձեռ*· *ունեն* nf· *ուստի գուցէ՝* [զ]որ ոչ nf ··· կարաց ներկանել «*որ ոչ ոք կարողացաւ ներկել*»: — Այնպիսի–*ի վրա նախընտրելի է տպ–ի* յայնպիսի–*ն*: *Կայ միայն կարմիր ներկեալ, առանց ի նախդրի*· «*Մորթս խոյոց կարմիր ներկեալ*» (*Ելք Իե* 5, *Լե* 23): *Բայց նաեւ՝* «*կարմրով ներկելով*» (*Ելք Լե* 35)· *գործիականին յաճախ համազօր է ի նախդրով հայցականը*:

280. 244. 2-3 «*Որ ծանրագինք էին, որ ոչ տուան աշխարհի ի պէտս մերում*»· *քազմաթիւ ձեռագրեր չունեն մերում, որ եթէ իսկական լինէր, պիտի լինէր մեր, քանի որ ի պէտս–ը (նպատակի) հայ-*

*

© National Library of Armenia

ցական է. համմտ. «կէսքն յանասնոցն ի պէտս արարան» (*Եղնիկ* 31. 31). *Վեց.*, 244. 4-5 «*ի պաշտաւն մարդկան տուան եւ կէսքն՝ ի տեսիլ սքանչելի, եւ յահ եւ յերկիւղ*»:

281. 244. 6-8 «*"Արար, ասէ, Աստուած զկէտս մեծամեծս", ոչ զի, քան զկարիդս եւ զմենդոս մեծամեծք են, վասն այնորիկ մեծս կոչեաց գնոսա գիրք, այլ···*». *մեծս բառի փխ ճիշտն է բազմաթիւ ձեռ–երի մեծամեծս, ըստ նախորդ մեծամեծս եւ մեծամեծք նոյն բառի*: — կոչեաց ··· գիրք–ը *կա՛մ պիտի լինի* կոչեցին ··· Գիրք, *կա՛մ* կոչեաց ··· Գիր, *թէեւ ձեռագրերում չկան*:

282. 244. 8-9 «*Լերանց նման են մեծութեամբ՝ վիթխարիք մարմնով*». *նախընտրելի է ձեռագրերի մարմնոցն, այսինքն՝ «մեծութեամբ վիթխարի մարմնոցն»*:

283. 244. 11-12 «*Այնչափ նշանակեցաւ ահագին մեծութիւն գազանացն ոչ յերեւելի տեղիս ծովուն գտանիին*». *եթէ գտանին բառի վերջին –ն պիրը յօդ չէ, ապա ճիշտը կը լինի կա՛մ գտանեն, եթէ մեծութիւն–ը հայցական համարուի, կա՛մ գտանի, եթէ ուղղական ու ենթակայ է*:

284. 245. 18 «*Ապրեսցիս* յայն ամենայնէ *վնասակար գազանաց*». *եթէ* ամենայնէ *բառը նախորդ* յայն–*ի հետ գազանաց բացառականի սրոշիչն է, ապա պիտի լինի* ամենայն: *Իսկ եթէ* ամենայնէ–*ն բուն դերանուն է, եւ* յայն–*ը նրա որոշիչն է, ապա* յայն–*ը պիտի լինի* յայնմ (*կամ* յայսմ), *որոնք կան ձեռ–երում: Եթէ* յայն[մ] ամենայնէ–*ն բուն դերանուն եւ խնդիր լինէր*, վնասակար գազանաց *բառակապակցութիւնը կը լինէր սեռական: Սակայն կարծում ենք, որ ճիշտն է* յայն ամենայն վնասակար գազանաց «*այն բոլոր վնասակար գաղանները*ից», *կամ* յայն[ց]···:

285. 247. 4-5 «*Հաստուացանողք լինելոց եմք ձեզ ի սկիզբն տուընջեանն վաղիւ*». *ի սկիզբն–ի փխ ճիշտը կը լինէր ի սկզբան, ինչպէս ամբողջ ՍԳ–ում, ուր չկայ ի սկիզբն ներգոյական*: — Վաղիւ–*ի փխ նախընտրելի է տարբեր ձեռագրերի* վաղու, վաղուին, վաղուի *սեռականը որպէս* տուընջեանն *տեռականի յատկացուցիչը. համմտ. «ի ժամ* վաղուի *զմիմեանս տեսանել»* (*Ագ* 28):

ՃԱՒ Ը

286. 249. 4-5 «*Ոչ եթէ ի սանդարամետս երկրի* դուղեալ *կային տունկք եւ ծոյք, եւ ապա եկին ելին ի վեր եւ երեւեցան*». դուղիմ–ը *նշ. է «լողալ», որ այստեղ չարմար չէր լինի: Մէկ ձեռ. ունի* դաւղել (*մէկն էլ* դողել), *որ նշ. է «թաքնուել» եւ այստեղ անհրաժեշտ բառն է ի հակադրութիւն յաջորդ «ելին ի վեր եւ երեւեցան» բայերի*:

Զեռ–երի դաւղեալ–*ն է պէտք նաեւ* 281. 4–*ում՝ «կերակուրն, որ* դուղեալ *կայցէ ի ջուրսն»*:

287. 250. 7-8 «*Ոչ յոյշ յիշատակի ունին ճկունք, եւ ոչ տեսիլ, զոր ընտրիցէ զդէմս ի դիմաց*». *ճիշտն է երկու ձեռ–ի որ ուղղականը. տեսիլ նշ. «տեսողութիւն»: 251. 15–ում ասուած է. «Զուկն զդարմանիչ իւր ոչ գիտէ ճանաչել»*:

288. 252. 11-12 «*Եւ արդ՝ տեսցեն որում չարաբարոյ գազանի բերեն զաւրինակ նմանութեան*». *ճիշտն է որո՛յ տեռականը, թէեւ էջատակում չկայ: կայ* ուրուբ (*կամ իրիբ*) զաւրինակ բերել *դարձուածքը, որ նշ. «մէկին (կամ մի բանի) նմանուել». համմտ. «նոյնպէս եւ ամենայն հարքն որ յաջորդեցան, [···] բերէին աւրինակ վերջնոցս»* (*Ագ* 447. 4-6), «*Բերէր զաւրինակ մարմնոյ Աստուածորդւոյն*» (*Ագ* 215), «*Ի վեր բերին զիւրաքանչիւր աւրինակ գուսոց տերեւոցն*» (*Ագ* 332), «*Բերիցէ··· զիւր աւրինակն*» (*Ագ* 330), «*Զնոցին աւրինակն յանձինս առեալ բարձեալ բերէին*» *եւ այլն*:

289. 253. 15 «*Դարձուսցուք անդրէն ի սոյնս յայլ դէմս երկրորդել*». *ճիշտն է երեք ձեռ–ի դարձցուք–ը: ինչը վերադառնալու, կրկին անդրադառնալու, եւ ոչ թէ մի քան վերադարձնելու մասին է: 306. 15 «Ի նոյն ճառ [···] դարձցուք»*:

290. 257. 10-11 «*Զմի բնութիւն են, քանզի ի ջրոյ են ամենեքին, եւ զմի գնացս եւ զնոյն լողս ունին ամենեքեան*». *զմի բնութիւն հայցականն անյարիր է են բայի հետ, որ մեզ աւելորդ է թուում: կամ էլ մէկ ձեռ–ի մի–ն է ճիշտը*:

291. 259. 9-12 «*Այլակերպ կերպարանաւք երբեւ առ ի պէտս որոյն պատշաճեալ են մագիլս* սուր *եւ* հաստաբիտ *ունին եւ կտուցս* կոր *եւ* սուր *եւ* խիստ, *եւ թեւս երագունս*». *եթէ* պատշաճեալ են–*ը ներգործական է, ապա (,) է պէտք մագիլս բառից առաջ: — Ինչպէս երագունս հատագաս որոշիչը համաձայնել է իր թիւս որոշեալի յոգնակի թուին, այնպէս էլ պատսելի է* սուրս (*որ մէկ ձեռ–ում եւ տպ–ում է*), հաստաբիտս (*ձեռագրեր ունեն* հաստաբեստս), կորս, սուրս *եւ* խիստս, *որոնք չկան էջատակում*:

292. 261. 9-10 «*Բազում իրք եւ բարք պատմին ի բնութիւնս իւրաքանչիւր* ազգ *թռչնոցն*». ազգ *ուղղական–հայցական որոշիչի (՞) փոխարէն ճիշտն է ձեռագրերի* ազգացն *կամ* ազգաց *սեռականը*:

293. 263. 13-14. «*Նմանեսցուք առանձնադործ գործոցն մեղուի, զոր իւրով իւրում անձինն համբարէ*». զոր–*ի փխ նախընտրելի է երկու ձեռ–ի որ ենթական, քանի որ մեղուն գործեր չի համբարում (զոր–ի յարաբերեալն անհրաժեշտօրէն նախորդ գործոցն բառն է). տ. 15–16–ում կարդում ենք «անձամբ ինքն իւր համբարս համբարէ»*:

© National Library of Armenia

— Իւրով–ը *ստացական ածական է, ճիշտն է մէկ ձեռ–ի* Իւրովին–ը, *կամ՝* իւրեւ:

294. 263.16 «*Զմաղս մեղերն*». մեղր–*ի դասական սեռականն է* մեղու, *որ չկայ հ̌յատակում*: 284.12 մեղու խորիսխ:

295. 264.12-13 «*Բարիոք դուիեցաւ մեղու ի Սողոմոնէ յառակս աւրինակացն նորա, եւ իմաստուն եւ հանճարեղ անուանեաց* զնոսա *ի գործ*». *ճիշտն է հինդ ձեռ–ի* զնա *եղակին, ըստ* մեղու *եղակիի*:

296. 264-265 «*Որ հնարագէտ իմաստութեամբ ի չտեմարանս* զմեղերն *կազմէ*». *ճիշտը հինդ ձեռ–ի* զմեղրն *հայցականն է: Դիտ. 294–ում տեսանք, որ* մեղեր–ը *սեռական վ համարուել բնագրակազմողի սխալ դատողութեամբ:*

297. 265.8-9 «*Գտանես յարկս պյարկաւք չինեալս՝* երեք *գմբեթակիրս զմիմեամբք յաւրինեալս*». *Թէեւ հ̌յատակում չկայ, սակայն ճիշտն է* երիս, *ինչպէս ունի Թոռն., հ̌ղ 75, իսկ տպ–ը՝* երեքգմբեթակիրս:

298. 265.17 – 266.1-2 «*Ծանրաբեռն ծանրութեամբ* մեղերն *պատուական լաստակոտոր զգուբս մաղոցն առնիցէ, եւ* [...] *ծորեալ ելեալ հեղուցու*». *տպ–ում եւ Թոռն., հ̌ղ 76–ում ենթական «ծանրաբեռն ծանրութիւն»–ն է. հաւանական է, որ ենթական* մեղրն *պիտի լինի, որ մէկ ձեռագրում է (եւ ոչ թէ* մեղերն «*սեռական*»). *Նրան է վերաբերում նաեւ* հեղուցու–ն:

299. 267.2 «*Զոր ունին* իւրաքանչիւր ազգացն *թռչնոցն բնութեամբ*». *նախադասութիւնը ենթակայ չունի. երկու ձեռագիր ունի* ազգք, *երկուսը՝* ազգքն, *գուցէ բնութեամբ քառից առաջ: Տպ–ը եւ Թոռն., հ̌ղ 77, ունեն* յիւրաքանչիւր ազգաց *քացառականը, որն անհրաժեշտ է սեռականի փոխարէն: Թոռն., հ̌ղ 77, ծան. 1–ում ենթակայ է համարել* (թռչուն)–ը:

300. 267.9 «*Որ եղեւ ի վերայ նորա* ընկերէն». *առանց նախդրի բացառական չի լինում. ուստի Թոռն., հ̌ղ 77–ն իրաւամբ ունի* յընկերէն, *եւ ծան. 3–ում աւուած է՝ «Ըստ այլ օր. գրինք՝* յընկերէն. — *Տպ.* ընկերին»: *Մէկ ձեռ. հ̌յատակում ունի* յընկերին, *որ* յընկերէն *ուղիղ ձեւի աղաւաղումն է:*

301. 268.8 «Պատերազմն *ուրեմն առնեն*». *տպ. եւ Թոռն., հ̌ղ 76, ունեն նոյն* պատերազմն *որոշեալ յօդով հայցականը, որ անկարելի է, եթէ հայցականը չունի զ– նախդիր: Կայ* պատերազմ առնել *դարձուածքը. արդ, չորս ձեռ. ունեն* պատերազմ *անորոշ հայցականը, իսկ հինգն էլ՝* պատերազմս *յօդնակի անորոշ հայցականը, որ դարձեալ կարող է տեղին լինել:*

302. 268.16-17 «*Ոչ կամին ընդունել ընդ յարկաւ զազգակիցս իւրեանց ի ժամանակ ձմերայնոյ*». *տպ–ը եւ Թոռն., հ̌ղ 78, նոյնպէս ունեն ի ժամանակ, որ անկարելի է ներգոյականի իմաստով. ուղիղն է ի ժամանակի. ձեռագրեր ունեն ի ժամանակս, որ նոյնպէս ընդունելի է: Ճաղորդ գիշերի իմիք–ը խանգարում է ի ժամանակ–ը թարգմանել «ժամանակուայ համար»:*

303. 269.1-3 «*Դարձեալ* ցառք *ճայից, ծերացելոց հինաւրէից հոգաբարձութիւնն, որ անդէն ի նոցունց նոցին լինի*, բաւական է *լինել որդւոցն ի պատուել զհարս...*». *Նոյնը՝ տպ–ում եւ Թոռն., հ̌ղ 78: Ո՞ր բառն է բաւական է–ի ենթական: Երկու ձեռագիր ունեն էին, որով ենթական կը լինէր* ցառք–ը, *ըստ որում* հոգաբարձութիւնն *կը լինէր* [զհոգաբարձութեն] *կամ* [հոգաբարձութեան], ցառք–*ի վանդիրը: Եթէ* ցառք–ը *դուրս հանուի*, բաւական է–*ի ենթական կը լինի* հոգաբարձութիւն–ը: Բաւական է լինել–ը պահանջում է [աւրինակ] *թառը, որ Թոռն–ը դրել է ( )–ի մէջ, բայց կայ չորս ձեռագրում. ուստի պիտի լինէր բնագրում:*

304. 274.14-15 «*Բոյն դարձեալ* յերկիր դնէ». *ուղիղն է հինդ ձեռ–ի* յերկրի *ներգոյականը, ինչպէս պահանջում է* դնել բայը. *վկայութիւնները բազմաթիւ են. «Եդ ի կառածոյ գերեզմանի»* (Ղուկ *իԳ* 53):

305. 277.2 «*Աչք հաւատոյն գիշերոյ ողջ են առ ի տեսանել*». *մէկ ձեռ. ունի* գիշերի, *որ տարածուած է որպէս ժամանակի պարագայ, թէեւ ուղիղն է ի գիշերի, սակայն ոչ լոկ գիշերոյ տրականը:*

306. 278.9-10 «*Ի պատրաստութենէ զինուցն եւ ի զարդուցն նշանաց եւ մխտ զրահս ընդ անճն անկանելոյ իմանան*». *երեք ձեռ. ունեն* արկանելոյ *բայը, որ այստեղ զրահս բառի կողքին նշանակում է «հագնել»* (*տե՛ս* ՆՀՒ, արկանել *բառայօդուածը*). *Նրան պակասում է* [յ–] *նախդիր՝* [յ]արկանելոյ, *բացառական, ինչպէս ի պատրաստութենէ եւ ի զարդուցն, որպէս իմանան ստորոգեալի բացառական նախդիրը:*

307. 280.10 «*Զի՛ք ինչ, զոր յԱստուածոյ կազմեալ ի՛ցէ*». *այս բայը կրաւորական սեռի է* յԱստու[ա]ծոյ *բացառականի պատճառով, եւ զոր հայցականը պիտի լինի որ, ուղղական, ենթակայ:*

308. 281.14 «*Զաւր մի ողջոյն չէ բաւական առ ի պատմել զբանչելիսն*». *ուղիղն է ձեռագրերի աւր ուղղականը որպէս ենթակայ:*

309. 282-283 «*Դուք՝ վանայք, յորժամ նստիցիք մանել կամ անկանել զմեռաքս նորա, յիշեսջիք զմտաւ ածել զյարութիւնն եւ զնոր ծոգումն ի մեռելոց, քանզի յայնմ զեռնոյ, որ կոչի էէրաս, այսինքն կերպասաբեր, գանձէ զվաստակ նոցա ի հանդերձս կակուղս*». *ո՞վ է գանձէ–ի ենթական. ի՞նչ այլանդակութիւն կամ վրիպակ է զվաս–*

© National Library of Armenia

տակէ յոդնակի ուղղականը գ– նախդրով, որի վրա տալ–ն ունի զվաստակս: Ովքե՞ր կամ ինչե՞ր են նոցա յոդնակի սեռականը: Գանձէ–ն կարող է եղած լինել գանձէք (դուք՝ կանայք). ուղիղն է զվաստակս հայցականը: Նոցա–ն կարող է լինել յայնմ գեռնոյ եղակիի վրա որոշ ձեռագրերի ունեցած յայնց գեռնոց յոդնակիի համապատասխան մը– նացուկը. եթէ ընդունուի է յայնմ գեռնոյ եղակին, ապա պիտի լինի նորա: Ճունարէն քնագիրը կարող է օգնել խնդրի լուծման: Նկատենք որ յաջորդ տողում (4–6) ունենք «Սղդի ազդի վրովոխմամբք, որ գտանին վ կերպասագործ գեռուցս, առցուք աւրինակ մեծի յարու– թեանն» յոդնակին: Որով յայնց գեռնոց յոդնակին այնքան էլ մեր– ժելի չէր:

310. 284. 13 «*եթէ թող տաց եւ արձակեցից զձեզ ի պարկեչտ ժողովոյս յեկեղեցւոյ*». նախընտրելի է եկեղեցւոյ սեռականը. ձե– ռագրեր ունեն եկեղեցւոյս, եկեղեցոյս:

311. 284. 14-16 «*կէսք ի ձէնջ ի լիցս ընթանան, եւ կէսք՝ ի տա– պեղելուցնք, ուր ստուերիւն է եւ անկարդ յամառութիւն՝ հանդերձ չահասէր ապականութեամբ*, որ նովին նմին սկեն». *ովքե՞ր են որ–ը, ի՞նչ են նովին–ը եւ նմին–ը, նախադասութեան ո՞ր բառերին են վե– հարաբերում: Ի՞նչ գործ ունի սկեն «հակում են» բայը: Ձեռագրեր ու– նեն նման իսկ են, եւ յարմար ենք համարում Գ. Նահապետեանի «եւ որ նոցին նման իսկ են» սրբագրութիւնը (էջ 240), որ նշուած է բնագրակազմողի Ը գլխի ծան. 63–ում: — Տապեղելուցնս–ի յոդն աւելորդ է. ձեռագրեր ունեն տապղուլուցնս եւ տապեղուլուցնս. բա– ռարանները՝ տապեղուլուցի, որ ճիշտն է՝ –ու–:

312. 286. 10-13 «*Այն, որ ետ մեզ յամենայն մեծութեանց, որ յամախեալ կայ յարարածս, նոյն տացէ զիւր սքանչելեացն, որ ի մերում անճինս տնկեալ հաստատեալ կան, նկարել զյիշատակն նորա առ մեզ*». ըստ մեզ՝ առաջին որ–ի յարաբերեալը նախորդ մեծու– թեանց–ն է, ուստի ուղիղ է երեք ձեռագրի կամ յոդնակին, կայ–ի փոխարէն: — Ըստ մեզ՝ նկարել–ը կրաւորական սեռի է, ու «ենթա– կան» նախորդ գիւր սքանչելեացն դոյականի իմաստն է. ուստի տացէ–ի հետ պիտի ունենանք տրական՝ իւրոց սքանչելեացն. գիւր–ի փխ. ձեռագրեր ունեն զի եւ ի, զի ի: Նախընտրելի է երեք ձեռագրի սքանչելեացս, –ս յոդով, քանի որ սքանչելիքները «ի մերում ան– ճինս հաստատեալ կան»:

ՃԱՒ Թ

313. 289. 3-5 «*Ասացին ոմանք ի յունաց այլազգս եւ զճառս աչ– խարհիս գրեցին, եւ զկերպարանս երկրի դրոշմեցին ըստ կամաց իւրեանց: Զգիցիմք երթալ զհետ նոցա*». վերջին նախադասութիւնն

ասողը Բարսեղ կեսարացին է, որով այնպէս է ստացուում, թէ նա հետեւելու է յոյն իմաստուններուն կողմից երկրի մասին ասուածնե– րին, որ մերժում է Մէկ ձեռագիր ունի չգիտիցիմք–ի սղաւաղումն է: Սխալ չէր լինի ձգիցի՞մք հռետորական հարցումը:

314. 289. 10 «*Ճայամ ամենայնէ կարծեացն իմաստնոցն յու– նաց...*». ուղիղն է ամենայն, եթէ սա կարծեացն անդամի որոշիչն է: Իսկ եթէ յայամ ամենայնէ–ն քուն դերանուն է (յայամ–ը՝ ամենայնէ–ի որոշիչը), ապա կարծեացն պիտի լինէր, [ի] կարծեացն՝ «*կարծիք– ների այս բոլորից*», որ չենք կարծում: Ամենայն քառի նոյնպիսի մի սխալ ձեւ տե՛ս դիտ. 284–ում:

315. 289. 17-18 «*Ոչ եթէ կերպարանացաց եւ զչափոց աչխարհիս փոյթ եղեւ պատմել*». ուղիղն է երեք ձեռագրի գկերպարանացաց գ– նախդրով քացառականը, ինչպէս գչափոց, որպէս պատմել բայի խնդիր:

316. 290. 10-12 «*Ամենայն ինչ, որ տուաւ մեզ ի նմանէ գրովք ի չինուածո հոգւոց եւ յաւգուտ կենաց են*». ուղիղ է է, եզակի ինչ– պէս տուաւ: Հմմտ. 295. 3 «եղեւ ամենայն ինչ»:

317. 290. 14 Ոտնաւոր եցան. քառարաններն ունեն լոկ ոտնաւոր էզոք բայը, ոչ ոտնաւորիմ: Տպ.ի ոտնաւորեցին–ը չկայ այստեղ էջա– տակում նշուած:

318. 290. 15-17 «*Զուղղագիր պատգամս գրոց եղծանել հնարե– ցան կամակորութեամբ, եւ փոխանակ նոցա զիւրեանց դնել ջանա– ցին, իբրու թէ իւրեանց կարկատուն բանքն աւելի...*». բանիմն որո– ղին, իբրու թէ իւրեանց կարկատուն բանքն աւելի (–ն յօդով) նախընտրելի է դարձնում –ն յօդով զիւրեանցն չեալը (–ն յօդով) նախընտրելի է դարձնում –ն յօդով զիւրեանցն փոխանուն սեռականը, որ ձեռագրերում է:

319. 291. 8-13 *Մի նմուշ քնագրակազմողի կէտադրութիւնից. «Գործն ցայժմ եւս կարդի դայ յամենայն ազգ գեռնոց, եւ մինչեւ ի կատարումն աչխարհի նոյնպէս կայ մնայ յարարածս: Եւ որպէս յոր– ժամ ընկենուցու ոք գոնդ ի գետին եւ պիպեացի զառ ի թափ տեղի ոչ ղադարիցէ ի գնացից մինչեւ գտցէ հարթ տեղի, եւ գետղ առեալ՝ անդ ղադարեացէ, սոյնպէս եւ քնութիւնքն, որ եղեն ի միջէ հրա– տրելի է երեք ձեռ–ի ազգէ յոդնակին:*

320. 291. 13-14 «*Գան եւ կարդին ազգ նոցա ի ծնունդ*». նախըն– տրելի է երեք ձեռ–ի ազգէ յոդնակին:

321. 292. 14-15 «*Անդստին յերկրէ քաղխեալ են կենդանութիւնն իւրեանց*». խօսքը թռչունների մասին է. եթէ բղխեալ են–ը ներգոր– ծական է համարուել, ապա կենդանութիւնն չի կարող հայցական լինել առանց գ– նախդրի, քանի որոշեալ յոդ ունի: Ըստ մեզ՝ կենդա– նութիւնն ողղական եւ ենթակայ է, ուստի ձեռագրեր ունեն բղխէ

© National Library of Armenia

Ես բնիկ (որ ծառայութիւնն ալ ընդունի) և [ի] (իմ ի՛մ) ինձ։ Ես ինձ (որ ես ի՛մ) ինձ։

324. 296. 13-15 «Ամէն ձեռնարկութիւն եւ արհեստ ի մարդոյ ի՛մ ինձ ունի։ Ես ինձ ի՛մ եմ։ Ես ինձ ի՛մ եմ։ Ես ինձ ի՛մ եմ

ընդ *մեծութիւնէ զաւրութեան փղի վամ* ընդ *այլ եւս մեծամեծ անասնոցն՝* (*փոխանուն սեռական. ՄՄ*) *որպէս* զարմանամ ընդ *մկան եւ* ընդ *մժղոյ* (*փոխանուն սեռականներ. ՄՄ*) [...] *եւ* ընդ *նուրբ խայթոցն կարճի*»: *Այս* ընդ–*ների փխ ձեռագրերում չկայ ի նախդիր, որ սխալ կը լինէր:*

334. 312. 17-313 «(*Զարմանամ*) *ընդ նուրբ խայթոցն կարճի, թէ պիարդ կորացեալ եւ կրկնեալ կաղմի հարկանել ըստ աւրինակի ման եւ վոր կերպարանաց փոշի, եւ պիարդ արկանեն պիծոյն յայնոսիկ, որ հարկաննեն*». արկանեն–*ի ենթական եղակի թուի կարճի բառի լռելեայն ձեւ կարիճ–ն է, որը պահանջում է եղակի առորոգեալ՝* արկանէ *կամ* արկանէն:

335. 315. 7 «*Ցարարածոց իւրոյ անձինն իմացաւ*». *ճիշտն է* յարարածոյ, *ինչպէս* 317. 8-9 «*Յորժամ սկսանիցի երեւել* արարած *մարդոյն...*»:

336. 315. 13-14 «*Զնչանակ իւրոյ նչուղիցն*». *ուղիղն է* իւրոց:

337. 315. 14 «*Ցայսմ* ընթերցուածոց». *ուղիղն է չորս ձեռ–ի* ընթերցուածոյ *եղակին ըստ իմաստի, որովհետեւ տ.* 9–10–*ում կարդում ենք Ծն Ս.* 26–*ը՝* «*Արասցուք մարդ ըստ նմանութեան պատկերի կերպարանաց մերոց*» *տողը, եւ ըստ յայսմ եղակի որոշիչի:*

338. 315. 18 «*Ինքն ընդ իմիմ խաւսեցաւ*». «*հետ*» *նշանակելու համար* ընդ–*ը եղակիում դործածւում է եղակի տրականի հետ (բացի ես–յց). ուստի՝* ընդ իմիմ[եայ]ն: 316. 9 «*Զէ լինչ պատչաճ, թէ լինքն* ընդ իմիեան *խաւսեսցի*»:

339. 316. 13 «*Վարդապետ իւրոյ համացն*». *ուղիղ է իւրոց. կամացն թէեւ անեղական է, բայց պահանջում է յոդնակի որոշիչ սառցական ածական թեք հոլովներում:*

340. 316. 15-16 «*Ինքն ընդ անձին խաւսեսցի իբրեւ ընդ այլոյ*». *ձեռագրեր ունեն այլս, որ յարմարն է, քանի որ եղակիում պիտի լինէր* ընդ այլում: 316. 5 (*դարբնի վամ հիւսնի մասին*)՝ «*լինքն միայն առանց* ընկերաց *նստիցի, լինքն ցլինքն ասիցէ՝ արասցուք դանակ համ արկցուք արաւր*»: *Առաուած էլ ասել է «Արասցուք մարդ ըստ նմանութեան պատկերի կերպարանաց մերոց»* (317. 6-7), *յոդնակիածեւ: կարծես բոլորն էլ մենակ, բայց ուրիշների հետ խոսելիս լինեն:*

341. 318. 10 «*Առ նա մաւտ կայինն*». *ուղիղն է ներդոյականը՝ առանց տեղափոխութեան իմաստի կայինն բայի հետ ձեռագրերի նման տրականը առ նախդրի հետ: «Եղբարք նորա՝ մաւտ առ նմա»* (*Նեեմի ԺԲ* 24):

342. 318. 16-17 «*Մարդ ի պատուոյ հրեչտակաց չէ ինչ հեռի հասանել*». հասանել–*ը պահանջում է ի նախդրով հայցական՝* պատիւ, *որ ձեռագրերում է: Ի պատուոյ բացառականը դրուել է հեռի–ի պատճառով:*

343. 321. 10-11 «*Որ արժանի արար զքեզ* արարածդ». *չորս ձեռագիր ունի զարարածդ որոշեալ հայցականը. բացայայտիչը դրւում է բացայայտեալի հոլովով եւ նախդրով:*

Մեր կողմից նկատուած վրիպակներ

Հատորի վերջում բնագրից նշուած են եւ ուղղուած չորս վրիպակ: Մենք նկատեցինք հետեւալները, բացի մեր դիտողութիւններում «վրիպակ համարուածներից.

		ՏՊՈՒԱԾ Է	ՈՒՂԻՂՆ Է
ԷՀ	9, տ. 11	*ի մէն*	*ի մէջ*
	14. 2, 19.10	*ընթանա*	*ընթանայ*
	14. 4	*չի՞ցէ*	*չէցէ՞*
	22. 1	*համբառնա*	*համբառնայ*
	22. 2	*վերանա*	*վերանայ*
	28. 10	*թուլանա*	*թուլանայ*
	30. 5, 31. 3	*գո*	*գոյ*
	98. 5	*գդործն*	*գգործն*
	103. 19	*յինէին*	*յինէն*
	114. 2	*մոա*	*մաւա*
	114. 6	*որոնց*	*որոց*
	167. 10	*եւէ՞ր*	*եւե՞ր*
	178. 8	*դի* (այլուր եւս)	*զի*
	235. 8	*ո՞րոյ*	*որո՞յ*
	259. 13	*յաւչէն*	*յաւչեն*
	286. 2-3	*ուրախարար զձեզ*	*ուրախ արար զձեզ*
	288. 5	*աստուածեղեն*	*աստուածեղէն*
	305. 2	*դեռնոյ*	*զեռնոյ*
	321.7	*արկէր*	*արկեր*
	321. 8	*նմանէ*	*նման է*

Եզրակացութիւն

1. *Ձեռագրերի այլընթերցումները նչուած են էջաւակում «որոչակի ընտրութեան եղանակով». արդ, վենետիկեան տպագրով բազմից անդրադարձանք, որ «կարեւոր» այլընթերցուածներ չեն յիշատակուել. ո՞վ կարող է երաշխաւորել, որ ձեռագրերի հետ նոյնպէս*

© National Library of Armenia

չի վարուել բնագրակազմողը: Այս արատաւոր եղանակը արդելք է հանդիսանում, որպէսզի ընթերցողները կարողանան դիտողութիւններով բարելաւել քննական բնագիրը, քանի որ, ինչպէս համոզուեցինք, Կիմ Մուրադեանի դասական դրաբարից ունեցած դիտելիքները թերի են: Բացի այդ, տարընթերցումները նշուած են ոչ միշտ յստակ եւ հասկանալի ձեւով:

2· Կիմ Մուրադեանը չի տիրապետում ճրեւանեան կէտադրութեան յստակ կանոններին, որոնք խախտուած են բազմատեսակ ձեւով, եւ խախտումները յաճախ են խանգարում:

3· Կիմ Մուրադեանը, որ շատ մեծ աշխատանք կ կատարել, լիապէս ի վիճակի չի եղել պատրաստելու դասական մի բարդ եւ շատ խանգարուած բնագրի քննական հրատարակութիւնը: Նա թերացել է նոյնիսկ տարրական չարահիւսական հարցերում եւ բնագիր է ներմուծել մերժելի ընթերցումներ:

4· Այս հրատարակութիւնը շատ հեռու է բաւարար լինելուց եւ կարող է չատերին թիւրիմացութեան մէջ ձգել դասական դրաբարի չարահիւսութեան տեսակէտից. ուստի ղղուչալի է: Անհրաժեշտ է բնագիրը խորապէս վերանայել եւ բարելաւել: Թող չկարծուի, թէ մենք Կիմ Մուրադեանի վատն ենք ուզում մեր դիտողութիւնների մի մասը միայն հրապարակելով. ընդհակառակն:

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ
ԺՆԵՒԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Résumé

REMARQUES SUR LE TEXTE CRITIQUE ARMÉNIEN DE L'**HEXAMÉRON** DE BASILE DE CÉSARÉE

MARTIROS MINASSIAN
Université de Genève

Kim Mouradian a publié à Erévan, en 1984, le texte critique en arménien classique de l'**Hexaméron** de Basile de Césarée, après avoir dépouillé 20 des 31 manuscrits conservés. L'édition comporte un avant-propos, une introduction, le texte arménien avec un apparat critique, des notes et des lexiques, mais l'auteur de l'article n'a examiné que le texte et ne fait part que d'une partie de ses remarques textuelles. Il conclue que l'apparat critique est composé d'un certain choix de leçons, le texte est entaché de nombreuses fautes de syntaxe, de mauvaises leçons, souffre d'une ponctuation aberrante, l'auteur du texte n'étant pas assez préparé pour ce genre de publication extrêmement difficile et nécessitant un savoir profond de la grammaire de l'arménien classique. Le texte est à revoir entièrement et profondément. On se gardera d'en citer des exemples, sans un choix sévère, dans des études linguistiques.

© National Library of Armenia